

Մ.Ն.ԿՈՒԶԱԵՎ

ԳՐՔԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԳՐՔԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ

002  
Կ-99

ՀՍՍՌ ԳՐՔԱՆԴԵՐՆԵՐԻ ՀԱՆԿԵՐՈՒՅՑՈՒՆ




ԳՐՔԱՆԴԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Մ.Ն. ԿՈՒԹԱԵՎ

ԳՐՔԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ  
ԳՐՔԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ

(ԳՐՔԱՆԴԵՐՆԵՐԻ ՀԱՆԿԵՐՈՒՅՑՈՒՆ)

«Առվելագույն գրող» ԽՐԱԳԱՐԱԿԱՆՈՒՅՑՈՒՆ  
===== Երևան - 1981 =====



Թարգմանչուն՝ Ա. թ. ՅՈՒԶԲԵՅՅԱՆ  
Խեցագիր՝ Լ. Գ. ՄԻՄԻՉԱՆՅԱՆ

«Գրքասիրություն» և գրքամուլություն գրքի հեղինակ Միխայիլ Նիկոլայի Կովֆակը (1888—1948) լավ հայտնի է գրքագիտության և մատենագիտության վեբռաքերյան իր աշխատառություններով։ Այս աշխատառության մեջ հեղինակի ուսումնասիրությունը է գրքի նկատմամբ սիրութաբեր գրանուրութիւնը, տարրեր ժամանակներում զրբին տրված զեաւառականները։ Նա հենցուած է Հակոյական նշանին վրա, որին իրան ուստակած և արհմատափրուզական գրքի փորձառու պիտակ, ազատ այբապետուած է Այս գրքի մասին խոսվելու ակնառունա հիշատակվուած է, որ աս «գրքասիրության տնօսական հիմնավորությունը տայտ միակ ժողովն է մեր երկրում»։ Անշատար, այս աշխատառությունը կհետաքրքրի և հայ ընթերցողին։

«Գրքասիրություն» և գրքամուլություն գիրքը առաջին անգամ լույս է տեսել Անիբրուգում, 1827 թվականին։ 1850 թվականին այն վերահրատարակվել է Մասկովյամ, Եկեղեցա հրատարակության կողմէց։

© ՀԱՅԱ Գրեատեաթրության թիվինական բանկերի ընկերություն, 1981  
բարգմանված է հայեւեն, 1981

Մ. Ն. ԿՈՒՖԱՆԵՎԸ ԵՎ ՆՐԱ «ԳՐՔԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ  
ԳՐՔԱՄՈՒԼՈՒԹՅՈՒՆ» ԳԻՐՔԸ

«Գրքասիրություն» և գրքամուլություն» գրքի հեղինակ Միխայիլ Նիկոլայի Կովֆակը (1888—1948) լավ հայտնի է մատենագիտության և գրքագիտության վեճաբանող իր աշխատառություններով, որոնց վերաբերում նև 19-րդ դարի ուսումնական գրքահրատարակության ուսումնակրթմանը, արտապահմանաց մատենագիտությանը, զրոբնական մատենագիտության բազմացած պրոբլեմներին, զրոգիտության ամբողջությամբ վեցրած։

Մ. Ն. Կովֆակի կանքը հարուստ չէ արտաքին իրավաբարություններով և հշանակալությունը է մետաքրոռությունների շրջանակի բավական վաղ ձևավորմամբ, որ հաճախ է հանդիպում խոշոր գիտականների մոտ։

Մ. Ն. Կովֆակը ծնվել է 1888 թ. նոյեմբերի 81-ին, գյուղական բանական բազմանդաւ ըմտանիքում, Կորոնեծի հանանքի Սատրոգորսկի գավառի Նոր Կովֆակ ավանու։ Գիտնագիտա ավարտելուց հետո (1917 թ.) Մ. Ն. Կովֆակը ընդունվում է Պետերբուրգի պրատինդասիրության ինստիտուտ, դրա հետ միասմանակ սկսում պարագմունքները Պետերբուրգի հնէաբանության ինստիտուտուն։

Այդ ժամանակ հնագիտությունը համարվուած էր նին անցյան ուսումնասիրու գիտությունների լուրացառուկ կոմպելս, և ինստիտուտուն դրա լուրացումն ընդգրկուած էր պատմական, բանասիրական և դրանց կեց հումանիտար գիտությունների լայն շրջանակ, այդ թվում և մատենագիտությունը։

Մ. Ն. Կովֆակը յան պատրաստություն է ստուգել պատմության և բանասիրության դասիցինների գծով, որոնց հկատմամբ նա ատանձնանաւուի հակուս։

Կրրություն ստանալուց մնայ Կովֆակը դասավանդուած է հին ու նոր լեզուներ, տրամաբանություն, մանկավարժություն, աշխարհագրություն։

իսկ ավելի ուշ նաև գրքագիտական դիսցիլիններ, այս բոլորը գուցակելով Պևտական Կենտրոնական գրապահատի (ավելի ուշ՝ Համամիուրինական գրապահատ) լենինգրադյան բաժանմունքում, Մ. Ե. Սալտիկով-Շչերինի անվան պետական համբային գրադարանուն և որոշ ակադեմիական թիմբանկություններուն տարած աշխատանքը հնա:

Նու ակտով՝ մասնակցություն է ունենում Ռուսական գրքագիտական ընկերությունում, ինչպես նաև Լենինգրադի գրքամիավաճ կազմակերպություններում, մասնավորապես 1923 թվականից գործող Անինգրադի գրքանիշների ընկերությունում (ակցուու Մ. Ն. Կուփամ աշխատում էր որպես նախագահի օրնիկը, իսկ 1927 թվականից՝ նախագահ): 1921 թ. մասնամիջնի 29-ին Ռուսական գրքագիտական ընկերությունում հանդէս գալու «Գրքի փիլիսոփայության պրոլետնը» վեճուցուով, Մ. Ն. Կուփամն այնուհետև հրատարակուում է այն մողվածուում, իսկ ավելի ուշ լրացված ձեռու՝ առանձին հրատարակությամբ:

Լենինգրադի գրքամիավաճան ընկերությունում կարդացման նրա միշտարկությունը նվիրված նաև գրքամիավաճան բնամատիկային («Գյուրին և գիրյը», «Գրքերի և նրանց բարեկանմների շրջանում, Միջինում», «Գիրյը Տորգնունի ստեղծագործություններում և նամակագրության մեջ», անվաշին տպագրի Խվան Ֆեռորդով և այլն): «Գրքաների այմանախում (1929), որ մանդիսանում է Լենինգրադի գրքանիշների ընկերության գործունեաւը ուրախառուկ հուչարձան, հրատարակիլ է Կուփամի «Պուշկինը գրաւաեր» նոդվածք նվիրված ականավոր պուշկինագուն R. I. Մողագալուու թիշատակին: Այս նոդվածում Կուփամը բացահայտու մեծ պուստի «գրքամիավաճան դեմքը, ցուց տվեց, որ «Պուշկինի անհատականության արծերավոր գեների մեկը նրա մշտական սերն է գրքի նկատմամբ»:

1920 թվականին սկսելով կարդալ դասախոսության կուրս գրքի պատմության վերաբերյալ, Կուփամը հանդէս նկավ որպես նայենական գրքամիության պատմության ուսումնասիրման հիմնադիմներից մեկը և 1927 թվականին լույս ընծածեց «19-րդ դարի դուստրական գրքի պատմություն», որը ոչ միայն գրաքեց ուսու ականավոր մատնեագետ-լուսագրիչ Ն. Ա. Ռուբակինի ուշադրությունը և արժանացավ բարձր գնահա-

կան առավել ականավոր գրքերի միջազգային ցուցակը:

Կուփամի մյուս գիրքը, նվիրված արտասահմանայն մատնեագիտությանը, երկար ժամանակ մնում էր որպես միակ թիւ ու շատ ամբողջական այխասությունը սովորական մատնեագիտական գրականության մեջ, որ գերազանցու էր Ա. Ի. Մալեխին (1925) և Ա. Ի. Կավիչևակու (1926) ծագաղու փոքր ակնարկները: Ռուշադրության է արժանի նույն Ն. Ա. Ռուբակինի «Արտասահմանայն մատնեագիտությանը» արված կարծիքը, Աննչուշու այս աշխատանքը ոչ միայն օգտակար է, այլ ուղղակի անհրաժեշտ է մեր երկրին, որն այս մատնեագիտական աշխատավորությունների գործացանցման առաջնային մեկն է գրավում երկրասնդուում:

Կուփամի՝ ծանալով ոչ շախտով փոքր այս գիրքը, որ առաջարկուու է ժամանակակից ընթերցողին դրա առաջին և միակ հրատարակությունից համարյա 50 տարի անց, անկանակ կգրավի շատուրի ուշադրություն:

Մինչ ըստերցողին այս գիրքը ներկայացնելը անհրաժեշտ է մի բարձրական հաշուածությունը կատարել այն տերմինների մետ, որոնց վերլուծությունը նրանում զգայի տնի է գրավում կապված գիրքը սիրողների դասակարգման մետ:

Հնիդակը ոչ մասն վկասակուում է ուսու հապանի գրքակնա և մատնեագետ Ն. Մ. Լիսովկու «Դ. Վ. Ուրամինսկիի որպես գրքաներ ու մատնեագետ» հոդվածը («Մատնեագիտական տեղեկություններ» ամսագրում հրատարակված, 1918 թ. № 1—2), այն ծանալով մեջքերուն է կատարում, բայց որ մենց մրամու է զնադվածք «գրքաներ», ոգրքամու, ուերմինների ստամեատմք, Կուփամի գրքի լույս տևանելուց հետո հապանի ուշադրությունը և Ն. Ա. Շամուրինի Կուփամի գրքին արված միակ գրախոսությունը («Գիտ. աշխատող», 1927, № 3, էջ 126—127), ի դեպ, այսուեղ նույնական հշվուն էր «Գրքամիություններ» կախականություններ և գրքամությունն օրին հեղինակի հենակությունների կախականություններ և գրքամությունն օրին հեղինակի հենակություններից, այս բայու և վերևու հշված՝ գիրք սիրողների Յ տիպերի սահմանություններից: Իրականուն այս անհմանությունը, որոնց մասին խոսվու է հայենական գրքագիտության մեջ, հայտնվել են Ն. Մ. Լիսովկու հոդվածից ամենի բան հարցուր տարի առաջ: 1818 թ. սկսեց լույս տևանել

**Վ. Ս. Սոսիկովի (1765—1818) «Թուալեան մատենագիտության փորձը» նատք կազմող աշխատությունը: Ռուս հիմնայի մասնագետը ծավալուն «Նախարաբան» է գրել իր աշխատության նամար, որտեղ ուսմերենում առաջին անգամ տրվում է գրքագիտական որոշ հիմնական տերմինների և համացոյցուների բացառությունը, որոնք, այսուհետև, մենք են ճարդենական գրքագիտական գրականության գործածության մեջ:**

Այսպիսով տեսնում ենք, որ իր գրի հիմնական բովանդակության ներք կազմուն տերմինների և համացորդությունների բացառապես նամար Մ. Ն. Կովակը նենցում է ուսական գրքագիտական գրականության ամպի բան մնակեմայրայա ականոցյրի վրա, որը սկիբը է առնեն «ուսական մատենագիտության նախարաբանից» Վ. Ս. Սոսիկովից և անցնում է այնպիսի մատենագետների, գրքագետների և գրքասերների աշխատություններվ, ինչպիսիք են Գ. Ն. Գենադին, Ս. Ա. Սորոցևսկին, Գ. Վ. Ռուսինիսկին, Ն. Մ. Լիսովսկին:

«Գրքափրություն և գրքամուրություն» գրի առանձին հրատարակության հայտնվելուն հախորդել են գրքափրության նոգերանության հարցերի վերաբերյալ զեկուցներ, որոնցով 1924—26 թվականներին Խորական գրքագիտական ընկերությունն և Ամերիկայի գրքագետների ընկերությունն անհանու է եկել ենդինակը, ի դեպ, այդ զեկուցները առենիք են ունի կարծիքների աշխոյից փոխանակման»:

Հէ ու այդ ժամանակ արդեն ուսական գրքափրությունն ուներ իր ավանդությունը՝ որով շատով ընդհանրացված Ու. Գ. Իվանիկի և Գ. Վ. Ռուսինիներու աշխատություններում: Դա Արդ Գևորգիիշ Խվանիկի (1873—1922) «Մասնավոր գրադարանները Ռուսաստանում: Մատենագիտական ուժեցուցիչ փորձ» աշխատությունը է՝ հրատարակված «Մրւական գրքասեր» ամսագրում 1911—1912 թթ.: Մյուսը՝ Դմիտրի Վասիլիկի Ռուսինիկու (1861—1918) գրադարանի դասական նկարագրությունն է՝ 1912—1915 թվականներին հրատարակված: Այս աշխատությունները լուս տեսներուց շատ շանչած ձևակերպվեց, ըստ Էլորդան հայրենական գրքագիտության մեջ առաջին անգամ, գրքափրությունը, որպես ամրողության վերցրած գրի մասին գիտություն: Այս ծառայու-

թյունը պատկանում է ուսու ականավոր մատենագետ Բոգդան Մտևան-նովիշ Բոնդարսկովի (1874—1965), «Մատենագիտական տեխնոլոգիաներ» ամսագրի ամփոփությանը:

Հենց այդ ամսագրի (1918, № 1—2) էջերում էլ նրագրագեցնեց Բ. Վ. Բոնդարսկովը «Գրքափրության մասին մատենագիտական դիսցիլին-ներում» զեկուցը, որտեղ մատենագիտությունը դիսկում էր որպես ամրողությամբ վերցրած գրի մասին ընդհանրացնող գիտություն («մատենագիտություն լայն իմաստով»), այսինքն, որպես գրքագիտություն մասնակից հասկացությամբ:

Մ. Ն. Կովակը նույն իր գրությունունը կենտրոնացրել է «գրքափրության նոգերմախության» վրա, բայց ըստ Էլորդան շրջանցկը է գրքափրության գիտական հշանակության նարքը, թենի հաստակութեան զիտակցություն էր գրքափրության ըննարկման անհրաժեշտությունը որպես գրքագիտության Ալյանսի հետարկություն կարելի է անել, անդրադառնարկ նրա «19-րդ դարի ուսուական գրի պատմությանը», մասնավորապես այդ աշխատությանը կցված «գրի ուսումնամիջնամբ ոլորտները և գրքային դիսցիլինները» միջամային, որ տեղ էր արված և գրքափրությանը: Մական իր գլամագոր խնիքը Մ. Ն. Կովակը, որպես «Գրքափրություն» և գրքամուրություն» գրի ընկերնակ, տեսնում էր այն բանում, որպեսզի տա որոշակի ընդհանուր բնուրագիր ու գիտական բացադրությունը այն հետաքրքրական երևույթի, որը կոչվում էր գրքափրություն, ինչպես նաև գրքասերների և գրի համարողների տևակների ծագման բավարար պարզաբնություն...»:

Քննարկելով գրի նկատմամբ սիրու տարբեր ձևերը, նրանց լուրսվի բնկավելը, տարբեր ժամանակներուն տրված զնամնատականները, ներինակը հակարական նյութը և օգտագործում, որին նա, որպես ուսու և արևմտավերաբարձրական գրի մմուտ գիտակ, ազատորեն տիրապետում է: Այսպէս, մեծ հետաքրքրությամբ են կարդացվում այն էջերը, որոնցուն նևոպոտմուն ևն գրքափրության ակունքները նրա տարբեր դրսերություններուն և ձևերուն, սկսած հնագույն ժամանակներից, ի դեպ, ինչպես զա հաճան է պատահում նետավոր անցյալի փաստերին և երևույթներին անդրադառնարու ժամանակից բնիւրցողն անկարական

հաստակորեն կարող է զգալ այն, ինչն իր արտահանությունն է գոյն քրայքային է ծամանակների կապը...» համեմատած հայտնի ձևակերպման մեջ: Մի՞րև ուշագրավ չէ օհնչ-որ Առաջեկոնությունից կը պարագաց պատահական արխիվները ընտրում էր բնօրինակ փաստաթուրերը և փոխարինում էր դրանք պատճեններով»: Այս գործառնությունը նախին պատմում է մ. թ. ա. առաջին դրդի նույն գրով Մարտարքը... Կամ հատկապես հազվադեպ գրքերի ճակատազգի ներկապված օրինակները, ինչպես Վայդորֆերի Բոլցանոյի առաջին հրատարակությունը, ուստական գրքային հազվագյուտ ներուժըներից շատերը, որոնց նախին Մ. Ն. Կոտֆանը պատմում է պատկերավոր շարադրանքով:

Հավական ուշադրություն է համարացմունք ներինակն այն հարցին, թե որին է «մազգագյուտ գիրը», թերևսով ամենատարեր օրինակներ, բազմազեցու աղբյուրների վերաբերյալ բավանդակային նորումներ տպով:

Փորձելով պատահանձնել այն հարցին, թե «Ի՞նչն է գրի մեջ ամենաարթեավորը և ինչո՞ւ է նա գրավում գրքաներն», ներինակն անհնատարենք դատողություններ է մեջքերում «գրի գովերգության» բանագագափոց: Փորձելով տալ առաջադրավագ նարդի պատճենությունը, Մ. Ն. Կոտֆանը անդրատառնուն է ուսու ականավոր մատնական-գրքաներ Սերգէ Ազերասանության Սորոյևսկու (1808—1870) գրքափորայան նարդերին արված դատողություններին: «Նման դատողություններից մենք այն էլ ուշադրության է արժանի. «Գրքաները գրեթե գնահատում է ոչ միայն այն բանի համար, որ դրանք տվյալ դիմաքան չկան շուկայում վաճառքում, որ հազվադեպ ին պատահում տվյալ վայրում, այլ դրանց բավանդակության միասնական արժանիքների, հրատարակության գիշեցկության, պահպանվածության, կազմի ներանաշակության նամար, ի դեպ, զիյավոր պայմանն այն է, որպեսզի դրանք վերաբերեն զիտուրյան կամ գրականության այն նորությունն, որոնց ուսումնամաքրության նամար հավաքվել է այդ գրադարանը, և որքանով որ նեարապիր է լրացնեն այդ նորությունը: Հիշեցնենք, որ այս խորենք ասաված են քի մարդու կողմէց, որի բացառիկ օճախածությունն իր առավելագույն դրսուրումն է գտնել իր մամանկի խոշորագույն նարդկանց ներս շփվելու բացառիկ տաղանդում և նրա գրքափորական զգացմունքներում, որոնք Ս. Ա. Սորոյևսկու ներինակու-

թյուն ներ դարձրել են բրոպական խոշորագույն գրքաների շրջանում:

Մ. Ն. Կոտֆանը, խոտելով գրի ներինակների մասին, ափասանքը է հայտնում, որ գրանցեց ամենակարսործները մնում են շրջանում: Ճնշինակը բացարձությունը է, որ դրանց պահպանակն ամեաշատ վերլուծության համախանակարել է այն հանգամանքը, որ գրքափորության և գրքաներների մասին կրիկի մեղինակները ներկ և ներիները գրքաներները, իսկ սիրել և օրինակությունը խում պահի մասին դժվար է: Այսպիսի պատճառաբանությունը հազիվ թե կարելի է լուրջ ընդունել, որովհետո այդ մեղինակությունները, որոնց վրա նենցում է գրի մեղինակը, լինի դա Ս. Ա. Սորոյևսկին թե Ուզանինակին, ինչպես և գրում նիշատակված ուրիշ շատերը, գրքաներներ են... Ակնեայու է և մի ուրիշ հակառակություն, եթե Մ. Ն. Կոտֆանը իր խնդիրներից մենք տեսնում է նետկալում «մինստագունեկ այն նոգերանական ուղիները, որոնք սկսվելով մեկ աղբյուրից՝ գրչից, նացնում են երկու տարրեր երևույթների՝ գրքափորության և գրքամոլության»:

Կրիկի է ներառել, որ տվյալ դեպքում մեղինակը կեն է գրի վերնակիր դուրս թերքած երկու հիմնական տերմինների՝ «գրքափորություն» և «գրքամոլություն» ընդհանուր արմատից, սակայն հազիվ թե արդարացի է դրանցում տասնեւ տարրեր երևույթներ. Հե՞ որ գրքափորությունը տարրեր պատճառներով ու իրադարձություններով պայմանավորված (այս նախին Մ. Ն. Կոտֆանը խոսում է բավական մարմաթամորեն) կարող է վերանել գրքամոլության: Խեթքը մեղինակը, ակնհայտորեն հակասում է ինըն իրեն, եթե արդարացիորեն պնդում է, որ գրքամոլին նորմալ գրքաներից բաւանող սահմանները անսահման նուր են ու աղոտ, որ գրքաները կարող է դառնալ գրքանու և այն:

«Գրքափորության նոգերնախոսության» իր վերլուծությունը Մ. Ն. Կոտֆանը կառուցում է նոգերանության և ֆիզիոգիակի բնագավառի տեսական և գործնական նպատմագրությունների հիմքի վրա, որոնց մշակվել են Ի. Մ. Սևէնենվի (1829—1905) և նրա հնաւորդ, ուսու մեծ ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովի (1849—1936) աշխատություններում, այն է մարդու գործունեության բոլոր գիտականական և ներագիտական գործողությունները հանդիսանում են ուժիկրսեր: Եթե լույս տեսալ Ի. Պ.

Պավոսի «Նենդամիների բարձրագույն նյարդային գործունեության (Վարչի) օրինակի հետազոտման քանանշայ փորձը» Պայմանական ուժիւնելու գիրը (այս գրի վրա է նենքու Մ. Ն. Կովալսը), այն գրակց նաև գրագիտուների ուշադրությունը Ազ ուժիւնականի բառու Ի. Պ. Պավոսի նույն է և «նապատակի ուժիւնը», ըստ որում, որպես «մարդկային գործունեության մեջ նպատակի ուժիւնը նախանդարեան ձև» հիշատակ վուն է «հնավարչական կիրքը», որ սամանափուն է որպես «մի մեծ ամրող շուրջան կամ նսկայական հավաքածուի մասերը կամ միավորները հավաքելու ձգում, որ սովորացար մեռն է անհասանելիու»:

Ի. Պ. Պավոսի ուսմունքի հաստիական այս դրույթները Մ. Ն. Կովալսին թվացին որպես լուրահատուկ ունեակնութ իր «գրքասիրության նոգերնախտության» հիմնավորման համար և հաստուկ ուշադրության արժանացած Ի. Պ. Պավոսի այն պնդումը, որ «հնավարչի կարելի է ամեն ինչ, ինչպես մշշին բաներ, անեակն է մենք և կարևոր...»: Ըստ որում, ուշադրության շը անմուտ այս, որ գրից առանձնահատուկ երևոր է և գուգակցում է ինչպես Եցուրական, այնպես է նույն կոլոտության հաստիացնելու, որ գրի հասարակ դասակարգումը «հնավարչական կրիստուկացների համոզիք գիտական նիմնավորում» (ի դեպ, Ի. Պ. Պավոսին ինը գիրը այս օրինակների թվին չի կարող տար մնացածովով բավական բարդ պրոբլեմների համոզիք գիտական նիմնավորում)։ Սակայն Մ. Ն. Կովալսը միայնակ չէր Ի. Պ. Պավոսի «նապատակի ուժիւնը» մասին ուսմունքին նենքելու իր փորձում, գրքասիրության երրուն բացատրության մամանակ (նույն բանը կարելի է տևանել ն. Յու Ռյանինիկում)։ Յու Ռյանինիկում «Գրքասիրության մասին» հոդվածում, հրատարակված 1929 թ. «Գրքասիրի պամանակում»։ «Գրքասիրության և գրքամուրության» մեխինակը կանգնեց ուժիւնագովայիշ (մնխանիկական ուղղություն նոգերանության մեջ) դիրքերում, որը մարդու հոգերանական գործունեությունը հանգեցնում էր գուգական ուժիւնականի միասնությանը, որոնք ծագել են ներվային սիստեմի վրա միայն արտաքի միավարիք աղջեցությամբ, առանց գիտակցության մասնակցության։ Հետևողականորեն նաև տեսակետի վրա ևնեւիք ուժիւնագովայիշ հիմնադիր Վ. Մ. Բնիստերին (որից նույնական Մ. Ն. Կովալսը մեջքերում է անում) հասցեց կենդանի և անկենդան

բնության սկզբունքային տարրերության մխամանց և հասարակական կրթությունը որպես լոկլեկտորային գործողություններ մերկացնելու, ընույթան և հասարակության մեջ նոյն օրինաչափություններում տեսնելու:

«Գրքասիրություն և գրքամուրություն» գրին տրված կարճ գրախոսականութ Ե. Բ. Ծանոթինը գրի բովանդակության վերաբերյալ մի շարք տարրերություններ անելու (հատկանշություն՝ «գրքամուրության և գրքասիրության հոգերմախոսական հիմնավորման» առիրով), տես այս աշխատության ընդհանուր գնահատականը, որն արդարացի պետք է համարել և այժմ։ «Հեղեղակի մենս, կրկնում ենք, շատ բանի շուրջ կարելի է վիճել, բայց սա չի նվազեցնում նրա հոյական գրված և հորոված նախնական մասնակտությունը, որը բարույնին չի բուզանում ոչ միայն մասնակտությունը որ գրքագիտունների, այն չուրաքանչյուր կրիված ընթերցողի ննտարրությունը այս գրի նկատմամբ»։

Այս գիրը խիստան շատ կորմերով բավական անսովոր երևույթ է ինչպես Մ. Ն. Կովալսի աշխատությունների շարքում, այնպես է մայրենական գրքագիտական գրականության մեջ ընդհանրապես։ Սրա մասին որպես կանոն միշտակվում է, որ սա «գրքասիրության տեսական հիմնավորությունը տարու միակ փորձն և սովորական տարիներին։ Առավել ևս մեր ժամանակ երա աշխատություններից մնելի վերաբրատարակումը պիտի գրավի ժամանակակից ընթերցողի ուշադրությունը սովորական շիտության ո գրի այս ականափառ զործի աշխատությունների նկատմամբ, և առաջին ներքինին մասնագետ գրքագիտունների ու գրի սիրուների ուշադրությունը։ Ի. Ն. Բնիստերի արդարացի դիտուրությամբ, «առվասական խոշորագույն գրքագիտուններից մեկը... կրթույթամբ պատմաբան, հնականությամբ միջայինների տեր մարդ Մ. Ն. Կովալսը, անկանական, արժան է այն բանին, որպեսզի սովորական գրքագիտական գիտությունը և սովորական մշակույթի պատմությունն ընդհանրապես, արժանին մատուցնեն նրան»։

Մեր ժամանականորում, գրի և գրքասիրության հարցերի նկատմամբ մեծ ննտարրության պայմաններում, Մ. Ն. Կովալսի աշխատությանն անդրադառնալը ննտարավորություն է տալիս հիշել շատ անուններ այդ

վեն ու ազնիվ ձգտման զարգացման ճանապարհին, որ հնարավորություն է տվել հեղինակին արտաճայուղ խորապես ճշմարիտ այս խոսքը՝ օմաջժ ծողովդրդական մասսաների արթնացումը դարավոր քնից, գիտության ձգտող հազարավոր նրիտասարդ ուժերը, այս բոլորը բացում են գրքի լայն դարաշրջանը։

#### ԱԼ. ԲԵՇՅԱՋԻՉՆԻ

Գրքի նկատմամբ սիրո մասին քիչ չէ զրված։ Տարրեր Հեղինակների կողմից բավական ուշադրություն է նվիրվել գրքասերներին և գրքամոլներին։ Մական որոշակի ընդհանուր բնութագրում և գիտական բացատրություն այն հետաքրքրական երևութիւն, որը կոչվում է զրբասիրություն, ինչպես նաև զրբասերների և գիրք հավաքողների տարատեսակների առաջացման բավարար պարզաբանում, մինչև այժմ չկա։ Բացի այն, որ այս խնդիրը հազարեալ է ինքնուրույն դիտվել, նրա գիտական և անաշառ վերլուծությանը հաճախ խանգարել է այն հանգամանքը, որ զրբասիրության և զրբասերների մասին երկերի հեղինակները եղել են իրենք՝ զրբասերները, իսկ օրինկտիվորեն խոսել սիրո մասին՝ գժվար է։

Սույն աշխատանքն էլ չի հավակնում գրքասիրության մասին հարցի սպառիչ լուծումը լինել։ Մեր առջև խնդիր գնելով հետազոտել այն հոգեբանական ուղիները, որոնք սկսվելով մեկ ազբլուրից՝ զրբից, հանդեցնում են երկու տարրեր երևույթների՝ զրբասիրության և զրբամոլության, մենք փորձում ենք սկզբում տալ վերջին երևույթի բնութագրումը՝ զրբամոլության կամ զրբի նկատմամբ կրթի, հուսալով այդ ճանապարհով, այնուհետև, հասկանալ և առաջինը՝ զրբասիրությունը, իսկ մեկը և մյուսը հասկանալով՝ ավելի լավ ըմբռնել զրբի հությունը, որն էլ տվյալ դեպքում հանդիսանում է մարդկանց կրթի ու սիրո առարկան։ Ինչպես ամեն-

օրյան կյանքում, այնպես էլ գրականության մեջ «գրքասիրություն» ու «գրքասիրությունը» միախառնված են, և տարբեր մակարդակի գիրք սիրողները կոչվում են ընդհանուր անվամբ՝ գրքան և ներկը. Դա լինում է ոչ միայն այն պատճառով, որ գրքասիրի անհատականության նկատմամբ, որպես երևույթի, գոյություն ունի մակերեսային, ոչ բավարար քննադատական վերաբերմունք, այլ զինավորապես, որովհետեւ կյանքում ավելի հաճախ հանդիպում են գիրք սիրողների միախառնված տարատեսակներ, որոնք իրենց մեջ ընդգրկում են գրքասիրների տարրերի կարգերի հատկանշական գծերը. Բայց այդ, և գրքի տեսությունը, և նրա գործնակուն կողմը՝ գրքին հաղորդակից տարբեր մարգկանց շահերը, պահանջում են պարզորդ պատկերացում այդ կարգերի և ամբողջությամբ վերցրած գրքասիրության մասին:

«Գրքասիրություն» բառն ինքնին հանդիպում է XVII դարում (մինչև XVII դարը գրքասիրներին անվանում էին «ժիլլորիլներ»): Բայց գրքասիրներն ու գրքամոլները, թվում է, միշտ էլ եղել են: Եվ զնում, և մեր օրենքում այդ մարդիկ արձանացել են տարրեր գնահատականների. Նրանց հարգում էին, նրանց վրա ժիժաղում էին, նրանց դատապարտում էին: Դա հետեւանք էր այն բանի, որ գիրք սիրողները հեռու էին միանման լինելուց: Հարգանք ու ակնածանք էր վայելում, օրինակ, էվֆիեմը, որի մասին պատմում է Թօնենթոնը իր «Հիշողություններում»: Սոկրատի աշակերտ էվֆիեմը ձըգուում էր հավաքել գրքերում զետեղված ամբողջ սիմաստությունը, այսինքն համարում էր ձեռագիր սիրությունը և այն տարօրինակ սիրեցյալն, որն աննկատելիորեն կտրում է իր սիրելի մազափունջը «հիշատակի համար», գողանում է զրն-

տության գանձարան»: Հայտնի փիլիսոփա Արիստոտելը, նույնպես, հայտնի է ինամբով հավաքած իր հարստագույն գրադարանով: Հակումը դեպի գիրքը բացատրվում էր բասի նյութական ձեր մեջ արտահայտված բովանդակության արժեքի ամենաբարձր գիտակցությամբ: Եվ բանի որ այդ արժեքը կարող էր բովանդակվել ամենաատարբեր (ըստ թեմայի և արտաքին տեսքի) գրքերում, ուստի արիստոտելյան տիպի հավաքածուները կրում էին Հանրագիտարանային բնույթ, որը համապատասխանում էր այդ ժամանակվա սիմաստությանը կամ գիտելիքների մակարդակին: Արիստոտելից երեք զար հետո, մ.թ. առաջին դարի գրող Սարարտը իր «Աշխարհագրության» մեջ հիշատակում է ուն Ակելիկոպտի, որը զբաղեցնելով պաշտոնական զիրք, պետական արդիվներից ընտրում էր բնօրինակ գաստաթղթերը և փոխարինում դրանք պատճեններով: Ստրարոնն այդ կոլեկցիոններին համարում է ուսմելի շուր գրքեր սիրող (Փիլորիու), քան՝ իմաստությունը սիրող (փիլիսոփա): Այլ խոսքով, Ապելիկոպտը գրքերի մեջ զնահատում էր ավելի շատ նրանց ձևական, արտաքին նշանակությունը, քան նրանց ներքին էությունն ու բովանդակությունը: Ակներն է, որ ի դեմք նրա մենք ունենք այլ տիպի կոլեկցիոններ, քան էվֆիեմը կամ Արիստոտելը: Դատապարտման թե ճանաշման, ժամփիտի թե ծիծաղի է արժանանում այսպիսի գրքասիրը՝ որ մեզ քիչ է հետաքրքրում տեսական հետազոտության բնագավառում: Բայց նրան էլ կարելի է հասկանալ, եթե ոնորմալ համարենք և այն տարօրինակ սիրեցյալն, որն աննկատելիորեն կտրում է իր սիրելի մազափունջը «հիշատակի համար», գողանում է զրն-

դասեղը, հերակալը և այն, պահպանելով այդ ինչպես սուրբ Հոռությ, և այդ առարկաներին վերաբերվում է ինչպես թանկագին մասունքի:

Հասկանալի՞ են այսպիսի երևույթները և նորմա՞ են արգուք: Ֆրանսիացի հայտնի գրող և մեծ գրքասեր Անատոլ Ֆրանսն իր երկերից մեկում գրում է հետևյալը. «Իմ կյանքում ես ճանաչել եմ բազմաթիվ գրքասերների և հավատացած եմ, որ սերը գրքերի նկատ ժամանելու է դարձնում որոշ թվով օրինավոր մարդկանց համար իսկական սերը առանց որոշ զգայունակության անհնարի է: Գրքերի օգնությամբ կարելի է երշանիկ լինել միայն նրանց փայտայինությունը: Ես առաջին իսկ հայացքից կարող եմ ճանաչել իսկական գրքասերին գիրքը վերցնելով նրա յարաձևությունից: Նա, ով վերցնելով որևէ թանկագին, հազվագյուտ, սիրելի կամ ուղղակի արժեքավոր մի գիրք, չի սեղմում այն չերմորեն ու փայտայանքով, ձեռքի ափով չի շոշում կազմը, կը ռնակն ու եղրը, զրկված է այն բնադրյաց, որը երբեմ ստեղծեց այնպիսի գրքասերների, ինչպիսի էին Գրույեն ու Պուրը: Նա ինչքան ասես կարող է պնդել զրբի նկատմամբ իր սիրո մասին, մենք նրան շենք համատա: Մենք նրան կապտասխանենք. «Դուք նրանց սիրում եք իրենց օգտակարության համար: Մի՞թե զա սիրել է նշանակում: Մի՞թե սիրում են մտքում շահ ունենալով: Ո՞չ Զեր մեջ չկա կրակ և ուրախություն, և զուք երբեք չեք վայելի այն բավականությունը, որն ստացվում է զրբի սաֆյանե կազմի զմալլելի անողորկությանը դողացող մատներով շոշափելիս»: Ֆրանսն ինչ-որ տեղ իրավացի է: «Գիրք հավաքելը, — գրում է Ա. Մ. Լովյա-

դինը, — հետաքրքրասիրությունը բավարարելու համար կամ ընդհանրապես գիրք մեռք բերելը միայն օգտակարության կամ նրանց բովանդակությունն օգտագործելու անհրաժեշտության նկատառումներով, չի ընդունվում որպես գրքասիրություն: Ֆրանսի մեջբերված խոսքերը երևան են հանում նրա մեջ ոչ միայն գրքասերի, այլև գրքամոլի հատկանիշները Այստեղ նշվում է ոչ միայն թանկության, հազվագյուտության, գեղեցկության կամ ուղղակի բովանդակության նկատմամբ հետաքրքրությունը, այլև առանձնահատուկ բղդայական հակում, զրբի փայտայանքի ձևով արտահայտված, այսինքն, մատնանշվում է զրբի յուրօրինակ կուլը երկրպագումը:

Փորձեք այժմ գրքասերին աված Ֆրանսի այս համառոտ ընութագրումից առանձնացնել «իսկական և անիսկական» գրքասերի գծերը և մեկի կամ մյուսի բարդ զգացմումներում ճանաչել ու որոշել գրքասիրության օտարությունը, ինչպես դա փորձում են անել որոշ հեղինակներ՝ առանց էական հաջողությունների: Սիրահարված մարդուն հարցըք, թե ինչու է նա սիրում իր սիրո «առարկան»: Ավելի հաճախ, եթե այդ հարցին պատասխանվի անկեղծորեն, կլսեք հետեւյալ խոսքերը. «Ինքս էլ շփտեմ, թե ինուս: Դուք էլ հաճախ «կողքից նայելով», ոչ մի ուշադիր քննադատությամբ չեք կարող լուծել այդ: Սերը զրբի նկատմամբ կամ գրքասիրությունը, ինչպես և մի այլ սեր կամ սերն ընդհանրապես, բարդ բղդացմոնք է, որում մեծ դեր են խաղամ և հաճախ միասին հանդիս են գալիս անհատական ճաշակների և բահաճանությունների անհամար տարատեսակություններ: Գիրք հավաքող-



ների ու գնահատողներն անհամար են: Նրանց բոլոր հետաքրքրություններն ու ճաշակները հաշվի առնել միանդամայն անհնարի է: Այս գրքաները հավաքում է բոլոր հնագույն գրքերը, իսկ սա՝ հնագույններից միայն հազվագյուտները և թիւ հայտնիները, երրորդը որոնում է և որոնում հազվագյուտ ու նշանափոր գրքերը, այսինքն հայտնի գրքերը, չորրորդը հետաքրքրվում է միայն որոշակի նմուշներով, որոնք ունեն առանձնահատուկ գրավչություն, հինգերորդը որոնում է որոշակի հրատարակչի կամ տպարանի գրքերը, վեցերորդը՝ մի նախասիրված հեղինակի տարրեր հրատարակությունները: Մեկը նախընտրում է «Հնագույն գրքերը», հատկապիս նկարագրութեածները, ուստի զրոյնների և մեծամասամբ, բանատեղծների առաջին հրատարակությունները, գեղարվեստական դրերը» (Մ. Տ. Ֆեկեր), զրսեորելով իր գրքասիրական հետաքրքրասիրության բազմազանությունը, երկրորդը, «Հազվագյուտ գիրը» «ամարիլում այնպիսի գիրքը, որը «կա միայն բացարձակուն քիւ թվոյ նմուշներով և ունի գիտական նշանակություն», առաջարկում է հավաքել այդպիսի «Հազվագյուտ» գրքերը և, բացի այդ, դասականների հազվագյուտ հրատարակությունները՝ «նրանց կենցանության օրոք լույս տեսած», ինչպես նաև ոդասականների այն հրատարակությունները, որոնց խմբագիրները զիմել են սկզբնագիր ձեռադրերի և զրոյնների սկզբնատիպ հրատարակությունների կամ տեքստին տվել են գիտական ժանոթագրություններ» (Ա. Ի. Մալէկին): Երրորդը, գտնելով, որ «գրքաները գրքերը դնահատում է ոչ այն բանի համար, որ դրանք հազվագյուտ են վաճառքում լինում կամ հազվագյուտ են տվյալ վայրում,

այլ նրանց բովանդակության միասնական արժանիքների, հրատարակության գեղեցկության, կազմի նրբաճաշակության համար, հավանաբար «գրքի հազվագյուտությունը» բոլորին չի համարում գրքասիրության «տարր», սակայն անհրաժեշտ է համարում ավելացնել, որ գիրք ընտրելուց գրքասերը պահպանում է հատուկ պայման. Նրա կողմից հավաքը վող գրքերը անպայման պիտի է վերաբերեն դիտության կամ գրականության այն ճյուղերին, որոնց ուսումնակիրման համար ստեղծվել է տվյալ գրադարանը և, սրբանով որ հնարավոր է, պետք է համարեն այդ ճյուղը (Մ. Ա. Սորոկակի): Եթե «գիտակցորեն» գիրք հավաքելու մեր այս վերջին մեջբերլած միջոցները տարրերվում են, ապա կարող եք պատկերացնել, թե որքան բազմատեսակ են այն գրքասերների ու գրքամոլների հետաքրքրությունները, որոնց համար գրքի հավաքածուներ ստեղծելն ու գիրք ընտրելը թելադրվում է ոչ թե բանականության փաստարկներով, այլ սրտի ձայնով ու ձաշակի պահանջով (թեև վերջիններն էլ երբեք չեն խոստովանի, որ գիրք հավաքելու իրենց շափանիշը բանական չէ): Ըստ էության հենց այսպիսիններին պետք է անվանել գրքասերներ, իսկ թիւ առաջ մեջ բերված հեղինակներին՝ գրքադատներ: Չէ որ նրանք հարցին մոտենում են՝ ձգտելով հրաժարվել իրենց անհատական ճաշակից, թեև դա նրանց հազվագեց է հաջողվում, և նրանք սովորաբար իրենց ճաշակն ու հետաքրքրություններն առաջարկում են կիսել և ուրիշներին: Օրինակ, եթե հեղինակը սահմանում է «Հազվագյուտ» գիրքը որպես այնպիսին, որը «կա միայն բացարձակուն քիւ թվոյ նմուշներով և ունի գիտական նշա-

Նակություն», ապա, անկասկած, նա դրսնորում է իր գրքաւսիրական հետաքրքրությունը, որովհետև, օբյեկտիվորեն, զրբի նշանակությունը «հազվագյուտ» զիրք «հասկացության համար էական հատկանիշ չէ. «հազվագյուտ» զիրքն այն է, որ գոյություն ունի միայն խիստ սահմանափակ քանակով: Սա է «հազվագյուտության չափանիշը: Որ զա այդպես է, ցույց է տալիս ամրող աշխարհում գոյություն ունեցող մատենագիտական տեղեկատունների ուսումնասիրումը, որոնք նշում են բոլոր «հազվագյուտ» զրբերը և դրանց զնիրը՝ զրբի վերջին աճուրդում և բովինիստական վաճառքում որոշված: Այդ տեղեկատուններում բարվական մեծ զին ունեն «համախ այնպիսի զրբերը, որոնք գիտական արժեք չունեն, սակայն դրասերների մեջ ունեն մեծ պահանջարկ, ինչպես Բոկաչչոյի՝ Վալորդֆերի (Հրատարակիլ) առաջին հրատարակությունը, որ 1812 թ. հուլիսի 13-ին 2260 ֆունտ ստերլինգով վաճառվեց անզիրական աճուրդում: Այլ հարց է, թի ո՞ր «հազվագյուտ» զիրքն է «արկավոր դնահատել ու պահպանել» (այստեղից էլ բխում է սահմանադատման անհրաժեշտությունը. ա) «հազվագյուտ» զիրք, այսինքն, որ գոյություն ունի «ույժ քիչ քանակի նմուշներով, բ) արգել վաճառված, որ չկա կամ «հազվադեպ է պատահում շուկայում, բայց մեծ քանակությամբ հանդիպում է հասարակական և անձնական դրադարաններում և գ) թանկարժեք զիրք, որ անկախ իր առառությունից ու «հազվագյուտությունից, ներկայացնում է հատուկ արժեք ձևի և բովանդակության տեսակետից): Սակայն, ի վերջո, բանականության ու նպատակահարմարության ինչպիսի հիմունքներով էլ զեկավարվելու լինենք, եթե

խոսքը գնում է մասնավոր անձանց անհատական հավաքածուների մասին, չպետք է մոռանալ հին առաջը, ոճաշակին ընկեր չկա: Դրա համար էլ հետազոտողին մնում է միայն, առաջին հերթին, արձանագրել զրբաներների այդ տարրեր ճաշակները՝ չանալով այսուհան ներթափանցել զրանց էության մեջ և դրանց թվացող բազմաթեակության մեջ գտնել բոլորին կապող որոշ ընդհանուր հիմք ու միասնություն: Այս ուղղությամբ են ընթանում որոշ արտասահմանյան հնդինակներ՝ հնարավորություն տալով զրբամիրության հարցերի գիտական դրվագքին: Ընդ որում, այս հարցերի գիտական լուծման սկզբնական փուլում չի խոսվում զրբամիրության տարրերի մասին, այլ միայն այն երևույթի կոնկրետ գծերի ու հատկանիշների մասին, որը մենք անվանում ենք սեր ու կիրք զրբի նկատմամբ:

Ի՞նչն է զրբի մեջ ամենազնահատելին և ինչո՞վ է նա դրավում զրբամիրին: Ունկնդրենք իրենց՝ զրբամիրներին: «Ես ձեզ սիրում եմ, իմ անքոն զիշերների և ոսկի մտքերի ընկերներ...» (Խ. Ռանչևսկի), «Կրակուտ հոգիների ու վիշտ զլուկների զիրեզմանոց: Մարգարեական տողերի մեջ տառապած սրտեր, զուր զաղուց փշրգել եք և չկաք մեր մեջ, բայց դողացող ձեռքով ես պատրաստ եմ քանդել հոգեսր դամբարանը և հարազատ երազների հետ ձուկել երազները մինում շշնջացող մեռյալների...» (Կ. Ֆոփանով), «Ընթերցանությունն ու զիրը մագում բացահայտում են մի նոր աշխարհ...» (Խ. Կարամզին), «Գիրքը մարդկանց համար նույնպիսի անհրաժեշտություն է, ինչպես հացը, բունը, օդը և ազատության արևը...» (Խ. Գրինեսկայա): Մշակույթի պա-

Հապան, գիտելիքներ կրող, իմաստության, բավականության, ուրախության, հույսի աղջուր, բարեկամ ու ընկեր, սկենդանիս, թեև «Ճնշած» Կարելի<sup>6</sup> է արդյոք մի հայացքով ընդդրկել զրբի ամրող անընդորկելի նշանակությունն ու դերը և ասել, թե ինչու են այն գնահատում և սիրում:

Սակայն պարզ է, որ այս կարծիքներն ամենից ավելի վերաբերում էին զրբի բովանդակությանը: Այսակ զիրքը գնահատվում է որպես մարդկային մտքի և խոսքի շտեմառն՝ տեսանելի (տպագրական) նշանով արտահայտված և նրա հնտ ձևով առօղջած մի ամբողջության մեջ: Ոչ մի տարօրինակ բան չկա զրողների, բանաստեղծների և շատ ու շատ սովորական մաշկանացուների՝ զրբի նկատմամբ ունեցած սիրո, երախտագարտության և երկրոպագության մեջ: Դա մենք կարող ենք տեսնել և անցյալում և մեր օրերում, բնակչության տարբեր խավերի մեջ: Քրբի բովանդակությունն այն փայլն է, այն կրակը, որնց անվանում են հոգին զրբի, հոգին: Սա էլ հենց վարակում է ընթերցողին, սա էլ հենց ծնունդ է տալիս զրբասիրությանը: Դրա համար էլ զրբի բովանդակությունը խաղում է առաջին նախասկզբնային դերը զրբասերի կապվածության մեջ: Սակայն չի կարելի միայն սրանով բավարարվել, որովհետեւ հաճախ ոչ միայն բովանդակությունից բացի, այն անկախ նրանից և նույնիսկ այն նկատի շառնելով, զրբասերը զրբի մեջ որոնում է առանձնահատկություններ, որոնք, իր համոզմունքներին կամ ճաշակին համապատասխան, տվյալ զրբի կամ ցանկացած այլ զրբի համար արժեք են հանդիսանում: Մրանք կարող են լինել և պատմական, և գեղարվեստա-հսկետիկական, և զրբի

պատահական այլ գծեր: Այսպիսով, մենք համարձակվում ենք պնդել, որ երբ զրբասերը, հետաքրքրվելով զրբի այլ ենք պնդել, թուլորսվին չի հետաքրքրվում նրա բովանդակություններով, բովանդակությունը նրա բովանդակության այս թամբը, ապա ի դեմս սրա մենք ունենք զրբամոլության արկան այն աստիճանի դրսերում, որին շատերը այնքան արհամարհանքով են վերաբերվում և որի քննարկմանը մենք այժմ դիմում ենք, հուսալով, որ զրբամոլության՝ որպես ոչ նորմալ երեսությի վերլուծությունը, բացահայտելով նորմալից շնորհանքը, կօգնի այսուհետեւ բնութագրելու «նորման» նորմալ զրբասիրությունը:

Ս. Ա. Սորոկնակու բնութագրմամբ, «գրբամոյն անխտիր հավաքում է այն բոլորը, ինչը նրան հազվագյուտ է թվում, ենթադրելով, որ բոլոր արգելված զրբերը, ցանկացած ինկունաբուլը, էլեկվիրը, ալղը (հին զրբեր), ինչ վիճակում էլ նրանք լինեն, ինչպիսի բովանդակություն էլ ունենան, թանկարժեք ձեռքբերում են...»: Այսպիսով, Սորոկնակու կարծիքով, զրբամոյի հիմնական հատկանիշը հանդիսանում է հազվագյուտ զրբի սետելից ընկնելն ու զրանց հավաքման սիստեմի բացակայությունը:

Սորոկնակուց հետո Գ. Վ. Ռույանինսկին էլ միայն զրբային հավագյուտությունների հավաքումը համարում է «գրբամոլութեագարի», այլ ոչ թե խելամիտ զրբասերի հատկանիշը: Այս կարծիքներին է հարուց և Մ. Գ. Ֆեները, ընդգծելով և այն, որ սռուսական իրականության մեջ զրբասիրությունը հիմնականում վերածվել է զրբամոլության: Կուլտորական հավաքուներ բիշ են եղել, իսկ մեծամասնությունը մերովովն ըիրյանի պես ստացել է «հազվագյուտություններ հավաքող-

ներ» դիպուկ մականունը: Այնինչ, կուլտուրական գրքասիրությունը, անհնատացող գրքերը խնամքով հավաքելով, մեծ կուլտուրական աշխատանք է կատարում և պետք է հայտնվի մեզ մոտ երկրի ընդհանուր աճի հետ: Եթե մատնանշված հեղինակները գրքամոլության զրանքում են հաղվագուռությունների անսիստեմ հավաքելու մեջ, ապա ուրիշների կարծիքով հաղվագուռությունների հավաքումը բոլորուին էլ գրքամոլության զիմանքոր հատկանիշը չէ: Գրքամոլը հավաքում է միայն այն, ինչին ձգտում է իր հետաքրքրությունը՝ համախ բարուրուին անորոշ: Նա գիրք ձեռք բերելու, հետևապես և դրանց տիրելու մեծ հակում ունի: Դա գրքի նկատմամբ ունեցած սիրուց է: «Սերը գրքի նկատմամբ հաճախ փոխվում է կրթի, և սովորական գրքասերները այդ դեպքում վերածվում են գրքամոլների» (Ֆ. Լուսուփին): շատ պարզ և բացարձակ ճիշտ ձեռքերպում է սա: Սակայն կիրքը գրքի նկատմամբ, ինչպես ընդհանրապես ցանկացած կիրք մարդու կյանքում, կարող է լինել լի՛ճ, հերոսական կամ ստոր, զուտ հսածիրական: Գրքամոլությունը երկրորդական կարգի երեսությ է: Գրքամոլությունը ծնունդ է ոչ թե քանականության, այլ՝ դասցմոնքի: Պ. Լակրուան գրքամոլներին բաժանում է նախ և առաջ այնպիսիների, որոնք հավաքում են գանձեր՝ դրանց տիրելու համար, երկրորդ՝ այնպիսիների, որոնք հավաքածուներ ստեղծելով ցանկանամ են բավարարել իրենց սնամիւրությունը, երրորդ՝ գրքամոլների նախանձից ելնելով, և չորրորդ՝ բացարձիկ կոլեկցիոներների, որոնք ունեն «փրենց հավաքածուն» և այլ բանով չեն հետաքրքրվում:

Առաջին կարգի գրքասերը գրքերին տիրելով իրեն երջանիք է դգում ճիշտ այնպես, ինչպես ժաման իր հաջողության զրավականը տեսնում է փող դիմելու մեջ: Երկրորդ կարգի կոլեկցիոները՝ փառամոլը, գրքերը հավաքում է առավելապես ցուցադրելու համար, այն էլ հատկապես շրջեղ ու հաղվագուռ հրատարակություններ: Նախանձ գրքամոլը որոնում է այն ամենը, ինչ ինքը չունի, բայց հենց որ ձեռք է բերում, նրա ցանկություններն այլ ուղղությամբ են ընթանում: Բացառիկ գրքամոլը իր հավաքածուի համար չի խնայում ոչ աշխատանք, ոչ ամբողջներ: Օրինակ, նա ունի գերարքայի 120 տարբեր հրատարակություններ կամ վուտերյան ստեղծագործությունների ամենաբազմաթիվի հրատարակություններ և այլն: Լակրուան գրքամոլության դրամորման վառ օրինակներ է բերում տարբեր անձանց մոտ, տալով այդ տիպերի դիպուկ բնութագրումը: Բայց նրա դասակարգումը լուրջ առարկության տեղիք է տալիս, այն բավականաշատ հաստատում չէ: Նախ և առաջ սժլատ ասովիս տիրապի գրքամոլը սովորաբար լինում է և նախանձ, փառամոլ գրքասերը, նույնպես, միշտ նախանձում է նրան, ով ավելի հարուստ ու լավ հավաքածու ունի: Ի դեպ, բացառիկ գրքամոլը կարող է և սնամիառ լինել: Վերջապես, որոշ կոլեկցիոներներ, որոնք լոկ փառամոլության համար են բառեղծել իրենց հավաքածուները, ո՞չ գրքամոլ են, ոչ էլ գրքասեր: Օրինակ, մի հարուստ ուսում վաճառական, ոչ գրավաճառ, ուներ մի քանի հազար հատորանոց գրագարան, որի մեծ մասն ընդհանրապես օգտագործված չէր, իսկ ինքն էլ, ինչպես պարզվեց, համարյա երբեք գիրք չէր կարդում: Մա-

կայն սնափառությունը հուշում էր նրան գրադարակների վրա մի քանի հազար զիբի ունենալու անհրաժեշտությունը: Գրքամոլ չէ նաև այն արխտուկրատ-ֆինանսիստը, որի մասին պատմում է կիբրովիլը և որը հանուն իր կարիքայի, մի երեկոյի համար իր մոտ ստեղծել է քրավական հարուստ ու լիարժեք գրադարան, զբերքը խանութից ժամանակավորապես վերցնելով ու վերադարձնելով գիշերային ընդունելությունից հետո, որի ժամանակ բարձրաստիճան հյուրերը պիտի գնահատեին նրա «կուտուրան» և գտունությունը»:

Այսաեղ ոչ մի զրքամոլություն չկա, ի՞նչպէսի մարդուն զրքամուր էլ չենք անվանի: Գրքամոլներ չեն նաև նրանք, ովքեր ունեն բացառիկ հավաքածուներ, թեև նրանց ոչ ապահովությունը, ոչ անհապությունը, ոչ նախանձը և ոչ էլ «բացառիկ» գրադարաններ հավաքելու ցանկությունն է ղեկավարում, այլ միայն սերը համակապես ավալ զբերի նկատմամբ: («բացառիկ կոլեկցիոների» տիպը, ինչպիս երեւում է կարուսայի բերած օրինակից, բօվանդակությամբ հետաքրքրում է ավելի, քան զրքի մշտական այդ պատճառով էլ բիշ է համբնենում զրքամոլի տիպին): Մեզ հայտնի է մի անձ, որը կարդալուց հետո իր մոտ ոչ մի հին կամ նոր զիբը չի թողնում, ինամբով և սիրով պահպանելով, աշկայն, Դոստունկու երկերի լիակատար ժողովածուն՝ այսպես կոչված Հորելլանական հրատարակությունը, որը, հոյակապ կազմված, գեղարվեստական էջադիրներով, գեղեցիկ շապիկներով, դրված է հատուկ պատվիրված դարակների վրա, հեղինակի կիսանդրու կողքին: Մրա համար Դոստունկու հատորները (idée fixe) սկսում նպատակ չեն հանդիսանում:

«Բացառիկ զրքամուր» չէ և հայտնի զրող Աստավան, որը դեմ էր մասնավոր աներում զրքարաններ պահելուն և որը սակայն ասում էր, թե ինքն ունի «տասնյակ կենդանի ուսուցիչներ» ու աշանյակ կենդանի բարեկամներ ի գեմւ այն զրքերի, որնք ես մշատիկ կարդում եմ կամ որոնց մշտական զիմում եմ տեղեկությունների համար: Այնուամենայնիվ, մյուսները, կարդալուց հետո անմիջապես ուղարկում եմ... մեսկատուն», ինչպիս անվանում է նա զրքարանները: Ակներկ է, որ այդ զրողին շատ ավելի հետաքրքրում է որոշակի զրքերի բովանդակությունը: Այդ զրքերը՝ նրա «ուսուցիչներ» և «բարեկամները», կենդանին են այն ղեպրում, երբ մյուսները նրա համար դադարում են գոյություն ունենալը: Գրքասերների կատեղորինների առավել ճիշտ սահմանագաղտում տալիս է կիսովսկին՝ հնենվելով Ալյանինսկու տեսակների վրա: Նա զրքի նկատմամբ կորով համակված մորդկանց բաժանում է երեք խմբի՝ բիբլոֆիլների, բիբլոմանների և բիբլիոտաֆների և միանդամայն իրավացիորեն նկատում է, «որ իրենց տեսական ձևակերպման մեջ բավական պարզորշ արտահայտված այդ ստորաբաժանումները համապատասխանում են ունենում ցայտուն սահմանադատում, և առանձին խմբերի մասնակի տարրերը համախ զույգում են միահան միացնեց»:

Ն. Մ. կիսովսկու կարծիքով, «զրքամուրը, լինելով զրքի զիտակ, զիբքը զնահատում և սիրում է ոչ միայն նրա արտաքին տեսքի, այլև ներքին բովանդակության համար: Կինելով այսպիսին, նա զրքի բարեկամ է, հետեւապես և լուսավորության: Հոգ է առնում նաև, որ զիբքն ավելի ու ավելի

Հավ կատարի իր կուլտուրական դերը: Այսպիսին է իսկական գրքասերի բարձր կոչումը: Իր առջև համապատասխան նպատակ դնելով՝ նա դրականության, դիտության և արվեստի որոշակի ոլորտներից հավաքում է առավելապես լավագույնը, ինարկե անուշադրության շմատնելով և իր հավաքածուի արտաքին գեղեցկությունը: Մերը և հարդանքը պրբի նկատմամբ անկասկած հուզում են և այդ հոգատարությունը Գրքամոլը նույնպես սիրող է, երբեմն էլ զրբի դիտակ, սահայն առավելապես նրա արտաքին կողմի: Հաճախ, հաշվի շառնելով պրբի բովանդակությունը, նա իր հավաքածուի համար ձգտում է ընտրել կամ շքեղ տեսք ունեցող, կամ հազվագյուտություն ներկայացնող, կամ էլ, վերջապես, որոշակի իրատարակության, որոշակի շափուկ, թղթի որակի, փառաբանված վարպետի կողմից կազմած և այլ զրբի: Այս դեպքում բովանդակությունը կամ ընդհանրապես անուշադրության է մատնվում, կամ հտին պլան է նահանջում: Այսպիսի կոլեկցիոները, հարատարակության գեղեցկության հոելից ընկնելով, հասկանալի է, ոժկամորեն է ցուցադրում իր դանձը և իմ ցոյց էլ տալիս է հետաքրքրասերներին, առա առավելապես պարծենկուտությունից ենելով, հիմնականում իր ձեռքով, որպեսզի հազվագյուտ ու նրամաշակ զրբի նմուշը այցելուի անդգուշությունից պատահարար շվենասփի: Բիրթուաֆը զրքասեր է, որը որոշ դեպքերում հարում է զրքամոլին, հավաքում է հաճախ առաջնորդ պահանում է այնքան շանասիրաբար, որ ոչ միայն լի կարող ժառանչել ուրիշներին հօգուտ լրաւագործության, այլև հաճախակի ինքն էլ ի վիճակի չէ

Հայտնաբերել ապինով թաքցրած զրքերը: Սա զուտ գերեզմանափոր է, աննորմալ տիպ, որի իսկական տեղը հոգեբուժարանն է: Պետք չէ, սակայն, խուսափել այսպիսի կուլեկցիոներից: Եղել են դեպքեր, որ լուսավորյալ զրքամոլները նրանց ճշմարիտ ուղի են դուրս բերելու:

«Բիրթուաֆից, որպես մոլական երևոյթի, վրա կանգ շառնելով, փորձնելով վերջիշխալ կարծիքների հիման վրա սահմանի զրքամոլի հատկանիշները: Հավանաբար զրքամոլ պիտի համարել այն զրքամոր-կոլեկցիոներին, որը ցուցարելու է, 1) կրբի վերափոխվող սեր զրբի նկատմամբ, 2) կայուն սիստեմի բացակայություն հավաքածուն ընտրելիս, բայց ինչ-որ հետաքրքրության առկայություն՝ հաճախ բավական ինքնատիպ ու բազմաբնույթ, 3) առավել հետաքրքրություն զրբի ձեր և արտաքին տեսքի նկատմամբ, քան բովանդակության, 4) առավելագույն հետաքրքրություն հազվագյուտ ու հնագույն զրբերի նկատմամբ, 5) հակում դեպի սահմանաթեշտու գիրքը և ինչ գնով էլ լինի սիրած զրբին տիրելու, այսինքն այն իր զրագարանում ունենալու ցանկություն, 6) որոշ զգայականություն զրբի նկատմամբ, մի յուրօրինակ երկրագում, 7) հապատություն, հաճախ էլ սահմանափություն ունեցածի հանգնպ, 8) նախանձ իրեն «անհրաժեշտ» զիրքն ունեցողների նկատմամբ, 9) զիրք «ողիզելու» ազանություն: Սրանք դեռ զրքամոլի բոլոր բնությագրական գծերը չեն, սակայն սա արդեն բազիս է այն հարցի, թե ինչ գծերից է կազմավորվում զրքամոլը, ինչպիսին է նրա հոգեբանությունը:»

«Ես միայնակ եմ, բայց ինձ հետ խոսում են մեռածնե-

տը, և գրքերը պատմում են ինձ նրանց իմաստությունը, որն ինձ անշախտ էր առաջ... Նրանք բարեկամներ ու ընկերներ են, որոնցով ես լիովին բավարարված եմ, ևս չեմ ձգտում այլ տիպի բարեկամների, բացի նրանցից:

...Թող ալլահը պահպանի այդպիսի ընկերներին: Նրանց ընկերն ու զրուցակիցը չի ձգտի շարին:

...Նրանց ընկերը կարող է չփախենալ անշրջանաց վիրափորանքից, ոչ ոք նրանցից վատ խոսր չի լսի:

...Նրանք մեզ թողել են իմաստություն, որի օգտակարությունը հավերժ է բոլոր ժողովուրդների մեջ:

«Ինչպիսի գիտելիքների էլ որ ձեռք պարզեմ, մոտ է ինձ ի դեմ զրբի՛: Այսպես է զովերգում զիրքը թիշ հայտնի հեղինակ Իրն-Ճասիրը (9-րդ դարի առաջին կեսից ոչ ուշ): Այս չերմ ու անկեղծ զրբանիքությունից ծնվում է զրբամոլությունը: Բարեկամներ՝ իրենց բովանդակությամբ արժեքափոր... Ինչպի՛ շարիրի նրանց հնապես շարիրի և այն արվեստը, որը ստեղծում է նրանց:»

գերաւ Ոչ ոք Ալլանինսկուն, այդ ոգորի պուետինս (Ս. Ս. Ռայցիկի), չի համարի զրբամոլ, բայց նրա հետևյալ բնույթի դիտողությունները՝ շտուն տանելու համար, կողմնակի անձանց, բացի հազվագեկ բացառություններից, գիրք չի տըրպում, կամ «սիրողական զրբերն, ընդհանրապես, զերադասելի են իրենց կուսական ձեր մեջ, չկտրված կազմերով ու չբացված էջնրով» և այլն, մեղ առիթ են տալիս եղբակացնել, որ դրասիրությունից զեպի գրքամուլություն մի քայլ է: Գրքասերի անհատական ճաշակին համապատասխան, վերը հիշատակված պատկերասրահում մենք կարող ենք տեսնել տարբեր «մասնագետների», որոնք զրբի որոշակի տիպ են ընտրել իրենց հավաքածուի համար: Մինչագինն ու Դաշկովը հավաքում էին գեղարվեստական դժունկարչություն (տարբեր ձևերով ու տարբեր մասշտաբներով), Ալմազովը՝ զրբեր, ծրագրեր, փորագրանկարներ և վիմագրություններ չին Սովոկլայի վերաբերյալ, Կետքնն ու Օրոյանինովը՝ թերթային այլուրնեն, Ե. Վ. Գովոյը՝ պսալիկ զրբեր, Գ. Վ. Ալլանինսկին՝ ստոհմագրություն ունեցող զրբեր ու մատենագիտություն, Լիսովսկին՝ մատենագիտություն ու գրքագիտություն: Մրա հետ մեկտեղ, նրանց հավաքածուները համարվում էին այլ զրբերի առաջ հոսքով: Հիմա արդեն կարելի է մատնանշել այն ուղիներն ու ելակետերը, որոնցով կաղմվում էին այս հավաքածուները, ինչպես զրբի այս կամ այն էական հատկանիշի աստիճանական նստվածք, առանձնահատուկ հետաքրքրության հետ միասին: Եթե, օրինակ, Ալեքսեյ Խազումովսկու զրագրաւանի՝ Ռուսաստանի ամենախոշոր զրագրաններից մեկի հազվադյուրական գրացուցակում թվարկված է 335 ինկունարույ, սկսած

1450 թ., որոնք հանդիսանում են Գուտենբերգի, Ֆուստի և Շեֆերի, Է. Ֆենչի, Պ. Ֆրիդրիխի ամենահին տպարանների արտադրանքը, ապա կարելի՞ է միթե շտեմնել այս զրբասերի նրբին ճաշակն ու լուսավորվածությունը, որն ուղղված է կուլտուրայի ու տպագրական գործի հազվագյուտ ու արժեքավոր հուշարձանների պահպանման գործին: Այս ճաշակին համապատասխան, կուեկցիոնների հայացքն էլ է հառնում մեկ՝ հայտնի զրբասերի գրագրարանի վաճառքին, մեկ՝ արևմտյան շուկաներին, մեկ՝ հնավաճառների զրացուցակներին, կամ էլ բռնում է անձնական ուղեցուցչներ, զրացուցակներ ու մատենագիտական նկարագրություններ կազմելու ուղին: Այսպիսով, նորից, տարբեր նրբերանգներով, մեր առաջ հանդիս են գալիս նոր գրքասերներ. հայտնի հրատարակիչ և զրավաճառ, պատվավոր գրքասեր Ա. Ֆ. Սմիթինը, որի նշանաբանն է՝ «Իս հանգիստ չեմ ունենալու, մինչև որ շհրատարակեմ մատենագիտությունը, չեմ մահանա, մինչև որ շտպագրիմ բոլոր ուսւ դասականներին», և սա կյանքի նպատակ ունենալով՝ ինքնազգությամբ իրականացնում է հնարավոր ամեն ինչ. և ուսւ խոշորագույն մատենագիտ ու լուսավորյալ զրբասեր ն. Մ. Լիսովսկին, որն իր գրքասիրությունը զարձեց «գրքագիտություն» նոր գիտության հիմքը՝ շդապարելով լինել զրբասեր և հավատալով, որ գրքարանությունը որպես գիտություն պետք է դառնա ոչ միայն շարդին պատրաստի զրբով հետաքրքրուղուների, այլև զրբային գործի բոլոր պրակտիկ գործիներին սեփականությունը: Մենք տեսնում ենք, թե որքան բազմերանգ են զրբասիրական հետաքրքրությունները, որքան բազմակողմանի են զրբասերների անհա-

ուական դժբրը... Փորձենք, այսքան ասվածից հետո, ի մի բերել գրքասերի ընդհանուր դժբրը այնպես, ինչպես ավելի վաղ հավաքեցինք գրքամոլի դժբրը, զուրս մղելով կոլեկցիոներ-գրավաճառի ու կոլեկցիոներ-գրքամոլի բուն հատկանիշները։ Մենք գրքասեր կոոչենք նրան, ով 1) գիրքը դիտում է որպես միջոց, ինչ-որ բանի համելու կամուրջ այլ ոչ թե որպես նպատակ. զրա հետ մեկող, իր գործունեության ոլորտի համապատասխան, զրքի դերը դիտում է որպես ուղիղական երևոյթ նույնիսկ այն դեպքում, եթե գիրքն ամբողջ կյանքում մնացել է գրքասերի դարակում, 2) ով զրքի վերաբերյալ այս հայեցակետից ենելով՝ չի ամփոփվում իր հավաքածուում՝ դարձնելով այն անհասանելի ուրիշների համար, այլ արձագանքում է դրսից եկող կուլտուրական պահանջներին, եթե ի՞նչարկի իր հավաքածուն կարող է բավարարել այդ պահանջները, և վերջին հաշվով ձգտում է, նկարագրության ճանապարհով, իր հավաքածուն դարձնել կուլտուրայի ու հասարակության սեփականությունը, 3) ով հիշում է գրքի դերն ու նշանակությունը, բայց և այնպես զրքային հավաքածուները ստեղծելիս դեկավարվում է ոչ թե պրակտիկ նկատառումներով (գիտական, «արդյունաբերական» և այլն), այլ ինքն իրեն սիրելի «առարկաներով ու ուրվականներով» շրջապատելու սրտի ինչ-որ մղումով, ինչպիսիք են տվյալ դեպքում զրքասերի համար «արժեքափոք» գրքերը, այսինքն, նա իր մոտակա նպատակը համարում է հենց այդ գրքային հավաքածուն (այսուեղ պետք է նկատի ունենալ, որ նպատակ է հանդիսանում ոչ թե զիրքն առանձին վերցրած, այլ զրքի հավաքածուն։ այս կետում զրքասերն ամենից ավելի է մո-

տեսում դրքամոլին, և հենց այս կետն էլ գրքասերին բաժանում է նրանցից, սրոնց գրքասեր լենք համարում, թեկուզ նրանք ունենան գրքի հավաքածուներ ու գրադարաններ), 4) ով ոչ միայն սառը տրամարանությամբ, այլև զգայականության որոշ խառնուրդով է սիրում զիրքը, ինչպես սիրում են սափորն անկախ այն բանից, թե մարդկությանը բուժող հղուկ է հոսում նրանից, թե՞ զատարկ կանգնած է այն, «Տա լա libelli»-ի պատվիրանին հնազանդ, 5) ով օսիրո պրոցեսում զրքի ազնը-վացնող ու ամրապնդող դերն զգալով՝ առաջնազացում է ապրում իր հավաքածուի համար զիրքը ընտրելու ճշգրտության բնագավառում, որն ունի հասարակական ու կուլտուրական նշանակություն, 6) ով բովանդակության նկատմամբ ավելի մեծ հետաքրքրություն է ցուցաբերում, (զրան են վերաբերում նաև նկարագրադրումները և ամբողջի ոճավորումը), քանի ձեւի (ամբողջի առանձին մասերի), հիշեցնելով զրքի կոչումը՝ միանության մեջ ձուլված մտքի և խոսքի հազորողությունը, 7) ով խնամքով պահպանում ու փրկում է անհետացող և զրանից էլ ավելի հազվագյուտ դարձած զիրքը՝ այսպիսի անհրաժեշտությունը զիտակցելով մշակության հետաքրքրության, այլ ոչ թե նեղ եսամուլական ու փառասիրական տեսակնետից։ Ահա զրքասերի դժբրը, նրանք զգիված ու ավարտված չեն, ինչ-որ տեղ նաև հակասական են և ոչ լիովին որոշակի, որովհետև վերցված են պատմություններ և կանքից, որտեղ «ամեն ինչ հոսում է», որտեղ կան հազարավոր անհատական նրբերանդներ, որտեղ կա իրավիճակների հավերժական դիալեկտիկա, որտեղ կա մշտական անցում աստիճանից աստիճան և հավերժ հավասարակշռություն՝ բներից բեկո։ Բայց և այնպես,

զբարանքի այսպիսի ստումանումն էլ հնարավորություն է տակ և անաշխատ նրա տիպիկ ու սոցիալական դեմքը:

\* \* \*

Փորձենք այժմ հոգեբնախոսորեն հիմնավորել գրքասերի երևույթը վերը ձևակերպված նրա բոլոր գերերով:

Մարդն անուանման բարդ մեքնան է, սովորական բնաւոր բնագդների և բարդ, ձեռքբնիրովի ու փլեքսների ու սովորութների սիօտեմ. «Երեխայի դաստիարակության ողջ պրոցեսը, հասուն մարդու ամրող զարգացումը հանգեցնում է նորանոր պայմանական ռեֆլեքսների առաջացմանը» Մարդը ծնվում է համեմատաբար բիշ թվով, հասարակ ու փլեքսներով, իսկ այնուհետև սկսվում է անհամար պայմանական ռեֆլեքսների առաջացումը (Դ. Կոշկարով): Նրա ողջ վարքը բաղկացած է մի շարք արարքներից, որոնց հիմքում ընկած են ռեֆլեքսների հանգեցնող սովորությունները: Սովորություններն օրգանիզմի ավելի լավ են ընտելացնում շրջապատող միջավայրին, և աստիճանաբար դուրս են մղում հասարակ, ռեֆլեքտորային պատասխանները: Բայց, հետքն պլած նահանջելով, վերշիններս լին անհետանում և որպես ամեն ինչի հիմքում ընկածներ, հաճախ ի հայտ են գալիս՝ իրենց հետ հաշվի շնորհելու փորձերի զեպքում: Որնէ մի բարդ երևույթի վերլուծությունը, իսկ այդպիսին անառարկելիորեն պիտի համարվի գրքասիրությունը, պետք է սկսվի այդ երևույթի հիմքում ընկած ընդհանուր ու հիմնական միջուկի մատնաշշամբ: «Բնագդները սովորաբար ստուման պահանջում են որպես կենդանիների կամ մարդու կողմից, առանց նպատակի կան-

խատեսման կատարվող, նպատակահարմար գործողություն՝ ներ, ի Հաշիվ բնականորեն զարգացած ներվալին համակարգի մեխանիզմի գործունեության: Մի կողմից դա բարդ ռեֆլեքսներն են, մյուս կողմից՝ սկզբնական կրբերը: Այս արքական գերզգայական հակումներից, որոնք ինքնին մարդու մեջ արգելն շունեն բնազդի բացարձակապես կոյց բնույթը, բանի որ ուղեկցվում են փորձով (Հիշողության գործողությամբ) և մտքի միջամտությամբ, հետաքրքրասիրությունը և հավաքական հակումը կարևոր գեր են խաղում մեր այս հարցում: Կենդանի արարածի օրգանիզմը պասսիվ ընկալի չէ. նրանում կա այն, ինչ դյուրինգն անվանում է Functionsbedürfniss, գործունեության պահանջ, զա անզուսա պահանջ է՝ ներփորհացի՝ նորի հանդեպ, վախի հետ միասին դայթակղի տպավորությունների նորացման ձգուման հիմքում ընկած է հնատաքրքրասիրության արմատը, որն իր հերթին կարող է լինել զվայական զվարճության կամ, համապատասխան պայմաններում, չոգու իմացության աղբյուրը:

Առաջին ձեր, այսինքն զվարճությունը, մի հոգեբանի (Ի. Ի. Լազշին) բնութագրմամբ՝ դրսնորվում է հետևյալ ձևով. 1) նա կարիք ունի ուժեղ ու բազմատեսակ գրգռիչների. 2) որ հաճախ ուղղված է զեպի բացառիկը, հազվագյուտը կամ նայողին այդպիսին թվացողը. 3) անի կոնկրետ-զգայական բընույթ, որը գրգռում է զգայական զյուրագացությունը, բայց մարդի չի արթնացնում. 4) կարող է, սակայն, առանց հերոսական զոհեր պահանջնելու, վերածվել, մարդուն հանդուն ու վտանգավոր գործողությունների մզելու ընդունակ անդուսապ կրբի. 5) երբ այն դրսնորվում է ոչ պարզունակ անձի մոտ,

սակայն հյուծվածության ու հղիացման հողի վրա, այն կարող է արտահայտվել նրբին խեղաթյուրումների ձգտման մեջ:

Այս սկզբնային հակումը դրասահրության մեջ մեծ դեր է խաղում: Նույնիսկ կանգ առնելով միայն այս ընտեղագրի վրա, մենք կարող ենք հնատաքրքրասահրությունը կապել դրասահրի՝ իր հավաքածուն նոր դրային նմուշներով համայնելու ձգտման հետ, կարող ենք հասկանալ նրա հնատաքրքրությունն առանձնաշատուկ ու հազվագյուտ զրբի ոլորտում և նրա հիացումը դրանցով: Ուզանինսկին, Հիշնելով իր մանկությունը, պատմում է, թե ինչպես, լինելով ընտանիքի միակ երեխան, գեռ բոլորին մանուկ հասակում, տեսնելով հորն իր սովորական զիրով, բազմոցին նստած, ծխախոտը թերանին, ձեռքին թերթ կամ զիրք, ինքն էլ անմիջապես նստում էր բալմոցին ու ծխախոտի փոխարեն խողովակածն թուղթը բերանին, թիրթով զինված, զիճքի ամենալուրջ արտահայտությամբ ներկայացնում էր ընթերցողի:

Սա նրա ամենասիրած խոգերից էր, երբ տղան մեծացավ, նա սիրում էր, որ մայրն իր համար բարձրածայն կարգա, իսկ կարդալ սովորելով ու ընթերցանությամբ տարմելուց հետո նրա մաս շատ վաղ արթնացավ անձնական զրեր ունենալու ցանկությունը, ուրոնց մեջ տպագրված են այնքան հրաշալի պատմվածքներ ու աննման նկարներ: Կարճ ժամանակում նա դիմեց բավականաշափ թվով մանկական զրեր, իսկ իրեն նվիրած փոքրիկ պահարանն էլ հարմարեցրեց զրանք տեղափոքելու համար: Դրանից հետո երկար ժամանակ այս պատմանի գրքանիրի ամենասիրած զբաղմունքն այն էր, որ լայն բաց անի իր գրապահոցի դռները և զրա առաջ, փոքրիկ

սեղանի մոտ նստած կարդա կամ նկարի: Դ. Վ. Ուզանինսկին պատմում է, որ հաճախ պարագելու ժամանակ կտրվում, շեղվում էր զործից և երանելի բավականությամբ հիանում իր զրբերի շարքերով: Ընթերցանության խաղից, հետաքրքրասահրությունից, զվարճությունից, որ զգում էր Ուզանինսկին, հոր հետ զրուանիքի ելած ժամանակ կրախանությ մտնելուց և զրականության ուսումնասահրություն մեծ բավականություն ստանալուց, անց նրան կրուտ զրբասեր ու լուսավորյալ ժամանագիտ դարձրած իմացասիրությունը: Հապա ինչպես տեղի ունեցավ սկզբնական հակման այս վերափոխումը բարձրագույն կարգի դերդպայական հակումի: Ստեղծվեցին մասամբ մտավոր աշխատանքի զիտակցական միջամտությամբ զեկավարվող սովորություններ, որոնք մեծ փոփոխություններ մտցրին ընազդի մեջ տեղական ժողովի սկզբնական հակման աղնվացման ուղղությամբ: Իսկ այս վերջինն առաջացել էր տեղակայման կամ հոգեբանական տեղափոխման հետևանքով, որի մասն նշել ենք, երբ խոսքը զնում էր գրքամունքների մեջ տեղի ունեցող տեղակայման մասին: Զգացմունքները պատկերացումների մի խմբից յուսուց տեղափոխելու այս կարևոր սկզբունքը, այն, ինչը որ միքրուն անվանում է transfer, և որը բաղմաթիվ անգամ, բայց աղոտ ձևով արտահայտվել է հոգեբանների կողմեց, ունի մեծ նշանակություն և պարզաբանվում է ֆիզիոլոգների կողմեց, պայմանական ոեֆեքտների միայն ժամանակակից պահմաներում: Մեր կարծիքով, այսպիսի տեղակայման ուղղությունների հարցի լուծմանը բավական գոհացուցիչ մոտեցում է ցույց տվել պրոֆեսոր Լապշինը: «Եյսպիսի տեղափոխությունը կամ փոխարինումը կարող է կատար-

վել բավական տարրեր ուղղություններով։ 1. նման պատկերացումից գեղի նմանատիպ պատկերացում։ Դեկարտի սիրային հավատակության առաջին առարկան մի թեմի շիլ աղջիկ էր, և նա այնուհետև հրապորվում էր միայն շիլերով։ 2. կցից գեղի կից։ Սա մենք նկատում ենք մասունքների պաշտամունքի և հուշանվերների արժեքավորության մեջ։ Տեղակայման մեր նախորդ շարադրանքում զրբամոլի մեջ զուգորդման այս երկու ուղղություններն էլն են նմանության, և կցության հանդս էին գալիս նկատի առնելով այն, որ ֆիզիոլոգները սեֆլերս և բնազդի միջն չական առքերություններ չեն տեսնում և գերազանում են մի ընդհանուր անվանում՝ «ունֆլեր», քանի որ նրանում ավելի պարզորշ է արտահայտվում դետերմինիզմի զարգացարը, անվիճելի է գրգռիչի կազք գերզայության հետ, առկա է պատճառի կապը հետևանքի հետ, ապա ձիշտն այն է, որ, ուսումնասիրելով պատկերացումների, զգացմունքների, հակումների փոխարինման կամ տեղակայման երկությը, պետք է խոսել սկզբնական բնագդները երկրորդականի, կամ բացարձակ սեֆլերսները հարաբերականի վերափոխելու, կամ էլ երկրորդ, երրորդ և այլն կարգի պայմանական սեֆլերսների մասին։ Գրքասերների նկատմամբ կիրառելի այս փոխարինման մասին խոսելիս՝ մենք ասութինք, որ հետաքրքրություն-զվարճությունը վերածվում է հետաքրքրության-իմացասիրության։ Այս անցումը կապ է ենթադրում էսթետիկական, դիտական, բարոյական կամ այլ կարգի արժեքավորության զարգացման հետ։ Ի տարրերություն հետաքրքրափոխթյան, այսուղեւ են զայիս մաքուր ինտելեկտուալ հետաքրքրությունը, «պրակտիկ անշահամբնդ-

րությունը, գիրքը, որպես գիտելիքների կրող, որպես որովանքակություն»։ Ընդհանրապես պեսօք է նշել, որ, երբ առկա զգացումը մի որոշակի պատկերացումից «փոխադրվում է» մի ուրիշ պատկերացում, ապա այս գործողությունն ուղղեցվում է գերզգայական հակման որակական կերպագիտությամբ։ Երկրորդ կամ երրորդ կարգի պայմանական ռեֆլեքսը կլինիկ թե հենց նզակին փոխարինող նզակի պատկերացում, այլ տեղափոխումը տեղի է ունենում մի տիպական կերպարից, կամ նույնիսկ հասկացությունների մի ամբողջ սիստեմից դեպի մի այլ տիպական կերպար կամ հասկացությունների սիստեմ։ Մարդու մոտ փոխվում են արժեքավորության տիպական զգացմունքները, մտածողությունը, զնահատման կարծիքները, «զարգագիտախնոսությունը»։ Այդ պատճառով էլ զրբասերն ու զրբամոլը տարբերվում են որպակես, այլ ոչ թե՝ բանակապես։ Գրքասերի հետաքրքրությունը զերանձնական բնույթի է, դիրքը միշտը է, այլ ոչ թե նպատակ, սակայն բավական արժեքավոր միշտը ինչ-որ մի արժեքավոր նպատակի համար այս հետաքրքրությունը ուղղված է դեղի տիպիկ-անհատական ու ընդհանուրը և ոչ թե գեղի նզակին՝ որպես այդպիսին, զրահամար էլ զրբասիրական հետաքրքրասիրության հիմքում ընկած է զրբի (ավագ կամ ընդհանրապես) կարենության զգացումը իմացության, մշակույթի, էսթետիկական բռվանդակության և այլնի համար, այսինքն, ուշադրության հատուկ որումը։ Հետաքրքրությունն իր բնույթով անխոնչ է ու հզփացած չէ, դա անդհհատ աճող կիրք է... թայց ահա... նա հանդիպում և կցվում է մի ուրիշ, ոչ «արաբերական», այլ անպայմանական «նպատակի ռեֆլեքսին», որով ակադեմիկոս

հ. Պ. Պավլովն անվանում է ոռոշակի զրգիշ առարկային տիրելու ձգտումը: Զուգորդումն այս երևոյթի հետ մի դեպքում Հանգեցնում է զրբասերի կողեկցիոներական գործունեությանը, մը այլ դեպքում՝ զրբամոլի յուրատեսակ գործունեությանը: (Այսպիսի ամուր միացության կողեկցիոներ դեռ բնդշանրապես չեն: Որովհետո ե՛ զրբասերին, և՛ զրբամոլին, այսինքն դրևն զրբի կրօնոս սիրողին, և՛ զրբի մոլագարին տեսականութեն կարելի է պատկերացնել նաև առանց անձնական զիրք ունենալու, մինչդեռ կարող են լինել կողեկցիոներներ, որոնք զրբի նկատմամբ ինչ-որ առանձնահատուկ սեր չեն տածում): Բանն այն է, որ սովորությունների ձևավորումը զուգորդական կապերի ձևով՝ բնազների մեջ խոր փոփոխություններ է առաջացնում, ինչպես զեպի ազնվացնում, այնպես էլ դեպի անկում: Հետևաբար, հետաքրքրությունը կարող է զարդարանալ հզգացածության հողի վրա, ինչպես վերևում նշվեց, մինչև զրբամոլի յուրահատուկ նրբին աղավազումները. օրինակ՝ հատուկ հետաքրքրություն միայն հավաքյուտ (նշանակությունից անկախ) հրատարակությունների, կամ պատրիկ, միայն նախասերած կազմով զրբերի և այլնի նկատմամբ: Իսկ մարդու հատուկ ուրիշ ռեֆլեքսի՝ ձեռքբերման ռեֆլեքսի հետ միացության դեպքում կերպափոխության ընթացքն ու հակումների ամրողության ձևավորումը ավելի արագ կընթանա: Դեռ 1916 թ. սկզբներին, ակադեմիկոս Ի. Պ. Պավլովը հայտարարություն արեց Շնապտակի ռեֆլեքսի վերաբերյալ՝ ինչնպանիների ու մարդկանց գործունեության վերլուծության հիման վրա, որում «մարդկային որդունեության մեջ նպատակի ռեֆլեքսի հայտնաբերման

ձևերից ամենամաքուրը, ամենահարմարը վերլուծության համար և դրա հետ մեկտեղ ամենատարածվածը նա համարում է կոլեկցիոներական կիրքը՝ ձևակերպելով այն ինչպես ոմք ամրոցության կամ հակայական հավաքածուի մասերը հավաքելու ձգտում, որը սովորաբար մնում է անհասանիլիս: Սա այն բազմաթիվ ռեֆլեքսներից մեկն է, որոնք կազմում են կյանքի բնազդը կամ բնդշանուր ռեֆլեքսը և այս ռեֆլեքսը ակազիմիկոս Պավլովը դասում է դրական շարժիչ ռեֆլեքսների խմբին, այսինքն կյանքի համար բարենպաստ պայմանների ուղղությամբ շարժվող այն ռեֆլեքսների, որոնց նպատակն է հափշտակել, յուրացնել այդ պայմանները, տվյալ օրգանիզմի համար սա հափշտակող, ըռողութական, տեսչական ռեֆլեքս է: Ակազիմիկոս Պավլովը սա համեմատում է զիջամարդ բռնողական՝ կերակրային ռեֆլեքսի հետ և նրանց միջև շատ բնդշանուր կողմեր է հայտնաբերում: Թե՛ մեկում և թե՛ մյուսում կարիորագույն կողմը ներկայացնում է ձգտումը զեպի առարկան: Դրա համբաւակմամբ ի հայտ էն գալիս հանգստացնումն ու անտարբերությունը, որոնք դորձում են մի որոշ ժամանակի թե՛ֆլեքսի մի ուրիշ հական կողմը պարբերականությունն է ինչպես ուտելուց որոշ ժամանակ անց անպայման վերականգնվում է ուսուելու ձգտումը, այդպես էլ որեւէ իր ձեռք բերելուց հետո ցանկություն է առաջանում ձեռք բերել և հաջորդը: Ակազիմիկոս Պավլովը նպատակի ռեֆլեքսին հսկայական կենսական նշանակություն է տալիս: Դա մեզնեց յուրաքանչյուրի կենսական էներգիայի հիմնական ձևն է: Ամբողջ կյանքը, նրա բոլոր բարեփոխումները, մշակութը կատարվում են նպատակի ռեֆ-

լիքսով, միայն այն մարդկանց կողմից, որոնք, իրենց առաջ որոշակի նպատակ դնելով, ձգտում են դրա իրականացմանը։ (Պավլով)։ Հավանաբար, նպատակի ռեֆլեքսը ի հայտ է զայխ և դիրք հավաքելու պրոցեսում, որը հաճախ զուգորդված է այլ առարկաներ համարելու կամ ուրիշ, տարրեր տեսչական ռեֆլեքսների հետ։ Դրա շնորհիվ, նպատակի ռեֆլեքսը մտնում է մարդու օլմարմնի ու արյան» մեջ և, նրա ու երկրորդ էությունը՝ զառնալով՝ նույնիսկ ժառանգութար է միախանցվում։ Այստեղ ակամացից հեշտում են Գենադիի դիտողությունը, որ դիրք ձեռք բերելու ձգտումը բխում է ընդհանուր, մարդուն հատուկ ռսեփականության վայրէլից։ Խելպես հետարքբասիրության ռեֆլեքսը կամ հակումը, այնպես էլ նպատակի ռեֆլեքսը կամ հավաքչությունը կարող է ունենալ, թեև դա պարտադիր լէ, կերպարանափառման (ավելի պրոպրեսիվ փոփոխության) կամ անկումային պրցես։

Այստեղ մենք կարող ենք զննել և առաջադիմական կամ ոհետագիմական տեղակայման երևությունները։ Առաջին զնպքում մենք զորք ունենք զրբասերի ստեղծագործության բարձրը ձեռքի, իսկ երկրորդ դեպքում՝ զրբամոլի դիրք դիպելու այլանդակ ու ծիծաղելի ձեռքի հետ։ Դրբի հավաքչության ժամանակ զրուերգով այդ նպատակի ռեֆլեքսը անշարժ մնում, այլ ինչպես ամեն ինչ օրգանիզմում, տատանվում ու փոփոխվում է՝ մեկ զնպի սասակացում ու զարգացում, մեկ էլ դեպի թուլացում ու բացարձակ ոչնչացում։ Հենց այստեղ էլ կարելի է տեսնել նրա նմանությունը կերպարային ռեֆլեքսին։ Եկեր ալիքան, որ միշտ հնարավորություն ունենաս նորից ուսուելու, այսպիսի մի իմաստում խոսք է ասված ա-

ռողջ ախորժակ պահպանելու համար։ Այդպես էլ մեր առարկայի մեջ։ Նպատակի ռեֆլեքսի ամրողական, աշմարիտ ու բնորմավոր դրանում համար պահանջվում է որոշակի լարվածություն, անշրաժեցած են արդելքներ, որպեսզի մարդկային կենսական ռեֆլեքսը դրանք հաղթահարի։ Այդ մշտապես արթուն ու լարված նպատակի ռեֆլեքսի վեհասարանը օրինակը, ինչպես և ապացուցն այն բանի, որ փոխակերպման պրցեսում հավաքչությունը հասնում է մարդկային հոգու վեհ դրսեարժմեների, մենք տեսնում ենք Արխտութելի՝ աշխարհի այդ համայնապարփակ հանճարի գործունեության մեջ։ Նպատակի ռեֆլեքսը նրան զրգում է խնդրել Ալեքսանդր Մակեդոնացուն՝ սպովել սազմական էքսպեդիցիաներից՝ բընապատմական հավաքածու հավաքելու համար։ Այստեղ ի հայտ է զալիս նրա հավաքական մեծ հակումը, որը, սակայն զրանով չի սահմանափակում, այլ տարածվում է կենցաղի բոլոր խոշոր երկույթների վրա, որի հետևանքով Արխտութելի հանճարփարանային գրադարանը, ըստ ավանդության, մտնում է հին աշխարհի ամենախոշոր գրապահոցը՝ Ալեքսանդրյան գրադարանը։ Սակայն Արխտութելը միայն զրբահավաք ու զրբասեր չէր, այլ սիստեմավորող ու դասակարգող։ Նրա հավերժ կենդանի ու կենարար նպատակի ռեֆլեքսը անընդհատ ձգտում է նոր, անծանոթ աշխարհների զրավմանը, և էներգիայի ամեան պրոցեսում նրա ստեղծագործական գործունեության արդյունքները հասցնում են ուրակական նոր համարդաւուներից։ բնապատմական ու գրքային հավաքածուներից զեպի կենդանական աշխարհի, զեպի դիտությունների դասակարգումը, զեպի տրամաբանության

զիտության ստեղծումը։ Նույն ձևով էլ XVIII դարում հանգես են զալիս Հայտնի Էնցիկլոպեդիաները։ Դիբրոյի գրքասիրությունը ու նրա գիտչելիքների հարստությունն ու ամբողջականությունը, նրա ունանարագիտակությունը օրդանապես կապված են և մեզ համար հասկանալի են զառնում, եթե ուշադրության առնենք նախորդ հետեւությունները։ Պահեր են լինում, երբ թվում է, թե գրքասերի ուժները զտնվում են մինեւն դիբրում, ու հետադիմում են, ոչ առաջադիմում, և երբ հնարավոր է ասել, թե նրանցից ինչ կստացվի՝ գրքասը՝ գրքամուլ, թէ՞ դրբի մոլագար։ Մա նման է այն պահճն, երբ փոքրիկ լույսնինսկին, զրագրանի առաջ նստած, երկար ժամանակ լուս հիանում էր իր գրքերով։ Այստեղ տեսնում ենք միայն սերը, հիացմունքը և հետո ձգող շարժագիթը՝ վերամարմնավորման ուրախությունը, երբ զիտող, զննող դրբասները գտնել է իր կենդանի որիմը, իր Հոգեբանական անդրագարձիչը, որը, անդրագարձնելով նրա իսկ ճաշակերն ու հավաքական ձգումները, «ընդարձակում ու նըշում է նրա անձը» (Տարդ)։ Այնուհետև կան տարբեր հնարագորություններ, մարդը գտնել է իր զորունեւթյան ոլորտը, ինչպե՞ս նա այսուհետեւ կդրսեւորի իր ակտիվությունը, ո՞ր կողմ կտանեն նրան «հետաքրքրասիրության ու հավաքչության ուժներները... Կանցնի նա արդյոք Հայացքը կախարդող տեսիլներից և արդյոք գրի կերպարում կդտնի» նրա նկրին գանձը՝ գրքասիրական կուլտուրայի ճանապարհը, թէ՞ նրան կկախարդի գրի տիրական կերպարանը՝ գրքամոլի ստրկամությունը։ Մեկի և յուսի կենսական պրոցես հավաքչության ուրուում կընթանա միանձնան։ Այստեղ

մենք կունենանք հետեւյալ պահերը։ ա) ձգտում զեպի առարկան, բ) պարբերականություն, գ) ուժիկրսի լարվածություն։ Բայց անկումայնության զեպրում մենք կունենանք միայն դրամոլի մետալոգիան (ցանկարամաքանություն) իր բոլոր խեղաթյուրումներով, որոնք, սակայն, նրան անկանոնություն չեն թվա, բանի որ նրա մտածողությունն արգեն հոսում է ցանկատրամաքանորեն կինզպիս աննորիմայի տեղակայման արդյունք։ Հաճախ այսպիսի խաթարված կունկիցիոներների հոգեբանության մեջ մենք կարող ենք հանդիպել այն բանին, ինչը կոզմում է կամքրի ուժ, բայց այս տպագրությունը սիսաւ կլինի, բանի որ «այս դեպքում զգացվում է ցածր հոգեբանական մակարդակը, որը նրանց ամբողջ գործունեության վրա բարացածության, ոչ բավականաշակ զիտալցականության և բութ, հաճախ անիմաստ համառության հետք է թողնում» (Լազուրկի)։ Այս համառությունն էլ հենց մենք սկզբում կամքրի ուժ ենք ընդունում։ Անշուշտ, մեր ուժիկրսի անկումայնության համար անհրաժեշտ են անբարենպաստ պայմաններ, որոնց ազդեցության տակ անկում է աւպրում նույնակ շնորհալի անձնավորությունը՝ բացարձակապես կորցնելով իր հակումներին զիմազրելու ընդունակությունը և շեղվելով թույլատրելի գործողությունների շափանիշից։ այստեղ արդեն ամուր միասնությամբ հանդես են զալիս աղավազումն ու աննորմալությունը։ Այս մարդկանց համար նպատակը զառնում է նեղ էգորստական, ի հայտ են զալիս միջոցների ընտրության ժայրացեղ անսկզբունքայնություն և արհամարհանը հասարակ կդեմք պահանջների նկամամբ։ ոլլապես թարսելունում (պատմում է Սիմք) աւպրում էր նախկին վանական

Դոն Վինցենտը, որը պատերազմի ժամանակ փլված մենաստանից հեռանալուց հետո սկսեց զբաղվել գրքերի առևտութ. Իսկ գրքեր նա շատ էր սիրում: Նա իր խանութը լցրեց շատ արժեքավոր նմուշներով, որ ուրիշների օրինակով վերցրել էր մենաստանի գրադարանից: Սակայն գնորդները նկատում էին, որ նա մի սիրում գաճառել հազվագյուտ և արժեքավոր գրքերու Քրանց համար նա ամենատաճավանական գներ էր սահմանում և զնորդներին ամեն կերպ շեղում էր գործարքից և, վերջապես, զիրքը վաճառելով՝ կարծրում էր, զույնը գումար, հոգոց հանում, ձեռքերն էր շղածում, հավանաբար ծանր տառապանք էր ապրում:

Մի անգամ նա մտադրվեց աճուրդի ժամանակ գնել լամբերոս Պալմարի կողմից 1482 թվականին տպագրված թանկարժեք լատիներեն գրքի միակը համարվող նմուշը: Ավուտափին Պատոսութ, նույնպես գրավաճառ ու նույնպիսի կրքու կոլեկցիոներ, ինչպիս Վինցենտը, խից նրանից գնումը, զարի զինը հասցենով մինչև մաքսիմում՝ 1,334 ֆրանկ. Վինցենտն անեծքներ թափելով հեռացավ աճուրդից: Զանցած մի շարաթ՝ Պատոսութի խանութը հրդեհվեց: Հրդեհը հանդցնելուց հետո խանութի տեղում գտան տիրոջ վառված դիակը: Սկզբում ոչ մենքի մաքով չէր էլ անցնում, թե զա կարող է բնի սպանություն լինել: Բայց նույն ժամանակը երկու սպանություն: Բերդափոսում գտնվեց մի վաճականի, իսկ նայահանգութեամբ՝ մի երիտասարդ գերմանացու դիակ: Երկու հանցագործություններն էլ գրավեցին ընդհանուրի ուշագրությունը, քանի որ կողոպուտով չէին ուղեկցվել և, հետևաբար, կատարվել էին ոչ սովորական

հանցագործների կողմից: Մրանից անմիջապես հետո հայտնաբերվեց ևս Զ դիակ: Բոլոր սպանվածներին, չնայած նրանց հասարակական գիրքին ու կարողությանը, կարելի էր դասի նույն խմբին, նրանք բոլորն էլ գիտությանը նվիրված մարդիկ էին և զրբի մեծ սիրահարներ: Ոստիկանությանը վիրշապես հաջողվեց մարդասպանի հնտքը դանել: Վինցենտի խանութը խուզարկելու ժամանակ դանվեց այնքան ազմուկ հանած Պալմարի զրբի նմուշը: Հարցաքննությունների ժամանակ պարզվեց, որ բոլոր սպանվածները դժբախտություն են ունեցել հազվագյուտ զիրք գնելու համար դիմել Վինցենտին: Պահանջվող զրբերը նրանց վաճառելով՝ Վինցենտն, այնուհետև, նրանց մի առանձին սենյակում ժուղակը զցնելով՝ ըստ պահում էր, զիրքը վերցնում, իսկ սպանվածների զիակները գիշերով հանում էր ու զցում ինչ-որ մի խուզ տեղի Այս բոլորը նա դատարանում անկեղծորեն խոստովանեց, այն պայմանով, որ դատապարտման դեպքում իր գրադարանը պահպանվի ամրողությամբ ու անձեռնմխելի ձևով: Իր հանցագործությունները նա բացարում էր զրբի նկատմամբ ունեցած կրքու սիրով ու գիտությունը հարստացնելու ցանկությամբ, գրա համար պահպանելով իր անգնահատելի զրբացին գանձը, նա չէր զցում այդ հանցանքների համար: Առում էր, թե իր զոհերից մեկին նույնիսկ առաջարկել է վերադանել փողը՝ վաճառված զրբի զիմաց, այն նա ստանալու համար, զնորդը համառել էր, Վինցենտն էլ սպանել էր նրան, հետևաբար մեղավորը գնորդն է... ո՞Բացի զրանից,—ասում էր վինցենտը, —մարդիկ մահկանացուն են, ու մի քիչ ուշ կամ մի քիչ շուտ մինույն բանն է: Իսկ լավ զրբերը պետք է պահ-

ոյանել, ինչպես աշքի լույսը։ Այս մոլիք, կամ ավելի ճիշտ կուրացած հանցագործը, որ զատարանում մանրամասնորեն պատմում էր իր սարօսափելի գործերի մասին, զատավարության ժամանակ միայն մի անգամ դառնորեն արտավից։ Դատավիրները քիչ էր մնում կարծեն, թե նրան տանջում է զղչումը, բայց այն հարցին, թե ինչն է արցումքների պատճուրը, Վինցենտը պատասխանեց, որ փաստաբանից իմացել է Պալմարի գրքի ... երկրորդ օրինակի մասին։

Դժբախտ վանականը դատապարտվեց մահվան։ Այս-աեկ մենք տեսնում ենք գրքի հավաքչամոլության ժայռահեղ դրսելում։ Վինցենտին մենաստանում շրջապատող պայմանները հավանաբար շատ էին նպաստում անկումայնության ընթացքի զարդացմանը... Սակայն, ինչպես այդ անոնրմալի, գրքամոլությամբ տառապողի, այնպես էլ մեծ հարգանքի արժանի գրքասիրի մոտ, տարբեր զուգընթաց երեւույթների պայմաններում, գործում է աեֆլեքսների նույնատիպ մեխանիզմ։ «Ամեն օր,— գրում է ակադեմիկոս Պավլովը, — մենք մղում ենք որոշ նյութի, որը մեզ անհրաժեշտ է մեր կենսական բիմեխական պրոցեսն իրագործելու համար։ Այն մեր մեջ ներարկելով՝ ժամանակավորապես հանգստանում ենք, կանգ առնում, որպեսզի մի քանի ժամից հետո, կամ մյուս օրը, նորից ձգտենք դեպի այդ նյութը՝ կերը։ Դրա հետ մեկտեղ յուրաքանչյուր նոր գրգոր մեր կողմից համապատասխան գործողության առիթ է տալիս, որպեսզի ավելի լավ ու լիակատար տեղիկություն կազմենք այդ գրգորի նը-կատամար։ Մենք զննում ենք հայտնվող պատկերը, ունկընդուրում ծնվող ձայները, ուժգնորեն ներծծում մեզ հասնող Հո-

տք և, եթե նոր առարկան մոտ է, փորձում ենք շոշափել այն և ընդհանրապես ձգտում ենք ընդգրկել ու հափշտակել յուրաքանչյուր նոր երեսությ կամ առարկա՝ մեր համապատասխան զգայրաններով։ Թե որքան ուժեղ ու անմիշական է մեզ հետաքրքրող առարկային ձեռք տայլու ձգտումը, պարզ է զառնում թնելուն այն արգելուներից, ու խնդրանքներից, որոնց ստիպված զիմում են՝ պահպանելու համար նույնիսկ կիրթ զիտողին ցուցադրվող առարկաները։ Ծշգրիտ զուգորդության անցկացքից այդ կերպարագին ու կողմնօրշչելու ու փլեքսների ու հավաքչության միջև, որը, ակադեմիկոս Պավլովի կարծիքով, հանդիսանում է նպատակի ու փլեքսի ախտական ձեռքուության մեջ անհամար առարկաները։ Այդ ու փլեքսով հափշտակված, սակայն ինքնատիրապետումը չկորցրած ցանկացած կողեկցիոններ պարզորշ զիտակցում է, որ ինքն անմիշականորեն ձգտում է իր հավաքածուն համալրելու հաջորդ առարկային, ինչպես ուսուելուց որոշ ժամանակ անց ձգտում է մի նոր բաժին ուտելիքի։ Միայն վերացության, զիտական վերլուծության մեջ կարելի է պատկերացնել գրքամոլի և գրքասերի մաքուր տիպեր իրենց ընութագրական գծերով, իսկ իրականում, ինչպես միանգամայն իրավացիորեն նկատում է խաղուսկին, ո հեարավորություն չկա ճշգրտորեն որոշնել այն պահը, երբ մարուր տիպը խեղաթյուրվում է։ Մասնավոր աղավաղման թեթև աստիճաններում մենք հայտնաբերում ենք այն կամբըզակները, որոնցով, մարդկային անհատականությունների հասուն միասնության միջև, նորմալ անհատը վերածվում է աննորմալի, խեղաթյուրվածի։ Մեր կողմից ավելացնենք,

որ միայն վերջինի ժայռահեղ դրսեւրումներն ու, որպես հեռավոր հակագործություն, առաջինի կատարյալ արտահայտություններն են հնարավորություն տալիս խոսել, այս դեպքում, գրքամարդի ու գրքամուխի մի միջանկյալ ձեի մասին։ Հաշարավոր նրբերանդեր գոյություն ունեն գրքաներների այդ երկու խմբից յուրաքանչյուրի սահմաններում։ Բայց որոնցից յարաքանչյուրի մեջ, արտաքին ամենատարբեր պայմաններում և տարրեր աստիճաններով գոյություն ունեն տարածամանակ զարգացող տեհնական ուժքերներ։ ա) կողմնորոշական (հետազոտական) ուժքերու, որ դրսեւրվում է ուշադրության, հետաքրքրասիրության, հետաքրքրության և, որպես առաջյունը, իր առարկայի ընարության մեջ (նմանության, կցության և այլնի կուգարգության ճանապարհով), բ) նպատակի ուժքերու, որ դրսեւրվում է առարկայի նկատմամբ ունեցած ձգտմամբ, այդ ձգտումի մեջ կամ փոքր լարվածության ու պարբերականության մեջ։

Հաշվի առնելով վերը ասվածը՝ փորձներ համուռտ ձևակերպել գրքամուխ գրքամուխ հասկացությունները։

Գրչասեր գրի սիրահար է, որ օծոված է գրքի, ուղիս հոգես ու նյութական մշակույրի արգասիի նկատմամբ ունեցած իմացափրական ու սանդազործական հետաքրքրությամբ և գրեւը հավաքում է կուլտուրական նպատակներով։ Այլ խոսելի, գրչասերը գրին ուղղված, զարգացած ու փոխակերպված տեհնական ուժիներավ մարդ է։

Գրչամար գիրք սիրով է, օծոված կրեսու հետաքրքրությամբ ու նիվանդագին համառույթյամբ, որը գրի և այն կուպիտ է զգիստական նպատակների համար կուտակելու ուղ-

ուրբյամբ վերածվում է մալուրյան։ Կամ, այլ կերպ, գրքամուլք գրին ուղղված, այս կերպով զարգացած ու անկում ապրած երկուող և երրորդ կարգի տեհնական ուժիներավ մարդ է։

Նախորդ բոլոր դատողություններից հետո մենք հնիտադրում ենք, որ հենց նոր արված ձեռակերպումները բավականաշափ հասկանալի են, որպեսզի լրացուցիչ պարզաբանման կարիք չըունենան։

Գրքասերը կարող է գրքամուխ դառնալ, իսկ վերջինիս համար գրքասեր գառնալն ավելի դժվար է, քանի որ գրքամուլությունն ունի հետասերման (ատավիզմի) որոշակի գծեր և չափագոյն գեազում սոսկ պատահական մի բան կարող է տալ մշակույթին (օրինակ՝ գրքամուխ մահը, որից հետո մընում է երա համարյա ձեռք շտված արժեքավոր գրադարանը)։ Գրքամուխունն այնպիսի երկույթ է, որին մեծ ուշադրություն պետք է դարձնել, որովհետև այն ավելի շատ է տարածված, քան սովորաբար կարծում են։ Միայն թե թիւ է նկատելի, որովհետև հազվադեպ է հասունություն ծալքահեղության աստիճանների Սխոլաստիկ կղմբականությունը, ոստիկանական-զգուշացային զգուցական ուժիմը, ուշ աշխատանքալին իրավիճակը, մամանակակից քաղաքակրթության քաղքինիությունը և անշատվածությունը կենդանի բնությունից, աճա թե ինչն էր սոսկ վերջին հարյուրամյակի գրքամուլությունը, չկրկնելով արգեն այն, ինչ ասվել է իր տեղում։ Գրքասիրությունը, պայքարելով բիբլիոփրեյսի (վախ ու թշնամանք գրքի հանդեպ) դեմ, պիտի պայքարի նաև գրքամուլության դեմ։ նախ, պայքարը գրքի նկատմամբ կրքի դեմ

մարքում է սերը գրքի նկատմամբ, իսկ երկրորդ, զիրքը սիրելով հանդերձ չլ կարելի թուլլ տալ, որ նու աիրի մարդու էությանը: Պայքարենով գրքամոլության դիմ՝ գրքասերը հաստատում է գրքի արժանիքները, որպես մի առարկայի, որը ժառայում է մարդկության հազրուցման բարձր նպատակներին, որը հասարակական մշակույթի ու նրա կենսական գործունի արգասիք է: Այս դիալեկտիկան կռահողարար է գիտակցվում գրքասերի կողմից, որն անհատապես նպաստում է ինտելեկտուալ կյանքի հարստացմանը, բարձրացնում է հարգանքը գրքի նկատմամբ, բարելավում որակը, նրա համար ստեղծում անանցողիկ հիշատակ՝ պահպանելով այն գալիք սերունդների համար: Խսկական գրքունիքի գրքի մասնավոր հավաքչությանը մշակութային գործ է և հանդիսանում է՝ գոյություն ունեցող հասարակական գրապահոցների մեծագույն մասի ծագմանը, գրքերը փրկելու և որոնելու համար գիտական արշավախմբեր կազմակերպելուն, գրքը ամբողջությամբ ու մանրամասնորին հետազոտող, գրքասերների կողմից պահպանվող գրքային հարստությունները հրապարակող ընկերությունների ու կազմակերպությունների մեծագույն մասի ստեղծմանը, գրքի նյութական ու գեղարվեստական որակի բարձրացմանը, գրքի կուեկտիվ հավաքման, պահպանման, բաշխման ռացիոնալ մեթոդների մշակմանը, գրքի ռեստավրացիային ու դիտական նկարագրությանը և, որ ամենակարսորն է կառավարության կամ մասնավոր անձանց կողմից ոչնչացման մատնված, ինչպես նաև՝ մարդկանց անփության ու տգիտության հետևանքով բնաշնչման հնթարկված և ամենակրծան ժամանակի կողմից անհայտաց-

ման եզրին կանգնած մարդկային ստեղծագործական մտքի արգյունքների պահպանմանը նպաստող գործուն: Գրքասերներներ եղել են միշտ և ամեն տեսակ միջավայրում, սակայն զիրքը միշտ չէ հանրամատչելի եղել, ժողովրդական մասսաները միայն բնագործեն էին զգում գրքի ամենաշաղթ ուժը, թեև գիրք լուսեին իրենց ձեռքում, բայց նրանից վախենում ու հարգում էին: Այժմ ժողովրդական մասսաների արթնացումը դարձավոր քնից, զիտելիքների ձգտող հաշարավոր երթատարդ ուժեր գրքի մի նոր գարաշըշան են բացում: Գիրքն առհասարակ պահանջում է ուշադիր և զգույշ վերաբերմունք, մեծ հարգանք, ինամբ ու պահպանում: Այս զգացումները պեսք է շանասիրաբար զարգացնել դրքի հետ գործ ունեցող յուրաքանչյուր մարդու, հատկապես երթատարդ սերնդի մեջ: Առավել ևս զրանք պետք է հատուկ լինեն բոլոր նրանց, ովքեր իրենց զամում են գրքասերների կարգը: Գրքասերությունը պետք է անել ու պահպանել: Չէ՞ որ դա կենսական բնագդի կամ նպատակի ռեֆլեքսի գրսնորում է: Եթե այն վերացվի ընդհանրապես, կլովի կյանքի լծակներից մեկը: Եթե այն անհրաժեշտ ձևով չպարզացնեն թեկուզ մի ուղղությամբ, կյանքի շատ զեղեցիկ ծաղիկներ կկրծանվեն: Բայց կարենոր է ոչ միայն գրքասիրության երևոյթը, այլև զրաբագմակողմանի ուսումնասիրությունը: Նախ և առաջ գրքասիրության երևոյթի ճիշտ հարցադրումը կարենոր է բիրլիուսցիայի համար, որն իր փորձային ընդհանրացումների ու օրենքների կառուցման ժամանակ, սրոնք զեկավարում են զրքի ընթացքը, չի կարող անտեսել այն զրքերը, որոնք պահպանվում են կոլեկցիոնների ու գրքասերի գրադարանում

և բավական ընտիր ու արժեքավոր նյութ են տալիս գրքի աղ-  
դեցւթյան, արժեքավորության ու շրջանառության մասին  
դատողությունների համար: Գրքի փիլիսոփայությունն ու հո-  
գերանությունը, գրքի նույն երեսություններն իրենց տեսանկյու-  
նից ուստիմնասիրելու գեպքում նյութ կստանան գրքի բնույթի  
և գրքի ու ընթերցողի փոխազգեցության էության մասին: Ի  
հայտ կդա արդեն գոյություն ունեցող տեսական զրոյթների  
ու գործնական եղանակացությունների ստուգման ննարավո-  
րություն: Այսպես, օրինակ, այստեղ արտահայտված դրույթ-  
ների հիման վրա, Ռուբակինի այն հայեցակետը, որ «գիրքը  
և նրա հեղինակը գրքի և հեղինակի մեր գծադրումներն են  
(ընկալումները), միշտ կինի միայն գրքի հետ կապված հաս-  
կացությունների տեսակայլած պատկերացումների պայ-  
մաններում, այսինքն այն, ինչ մենք տեսնում ենք գրքամո-  
լության մեջ և, հետեւապես, սխալ է դիտակցության հասկա-  
ցությունների, պատկերացումների, դատողությունների և  
ապրումների սովորական՝ շտեղակայված վիճակի համար:  
Ռուբակինի այն հետևողությունը, թե «իսուսքը, նախադասու-  
թյունը ուրիշի մարք, ուրիշի զդացմունքի հաղորդիչներ չեն,  
այլ գրգիշներ են», բավականաշափ ճիշտ է գրքի մոլուցքով  
տառապողների համար և համարյա սխալ է գրքասերների  
համար, հետեւապես կարիք է զգում որոշ էական նշանան,  
ավելի ստույգ՝ այն բանի հաստատման, որ խոսքը, նախա-  
դասությունը ու գիրքը և անձնական դրգիշներ են, և ուրի-  
շի մտքի, խոսքի, զգացմունքների և այլնի հաղորդիչների  
Մեր կողմից առաջ քաշված հարցնի ուսումնասիրությունը  
կարնոր է նաև ընթերցանության ու դաստիարակության պը-

բոբլեմների լուծման համար (այսինքն արդեն ունի ոչ միայն  
տեսական, այլև կիրառական նշանակություն): Ընդհանուր  
մանկավարժությունը և ընթերցանության զատիարակումը  
հատուկ ուշագրություն պիտի հատկացնեն մի կողմից գրքի  
և գրքայնության, մյուս կողմից հասարակական գործունեու-  
թյան փոխազգեցության հարցին, ինչպես նաև «գիրքը ըը-  
նության մեջ» և «ընության գիրքը» հարցերին, քանի որ վե-  
րացական գրքայնությունը և հակումը սրբների և ուրվական-  
ների նկատմամբ ծնում է պատկերացումների տեղակայում,  
հետեւապես մեր շոշափած թիմայի բազմակողմանի լուսա-  
րանման դեպքում նշված զիսցիպինները, գիտակից ընթեր-  
ցող ու քաղաքացի սուեդելու համար, պետք է ձգտեն նաև  
այս պրոբլեմների լավագույն լուծմանը, որպեսզի գրքի ըո-  
վանգակությունն ու գիրքն ամբողջությամբ վերցրած լինեն  
ոչ թե լոկ գրգիշներ, այլ հեղինակի մտքի ու խոսքի հա-  
զորդիչներ, քանի որ այլ կերպ մշակույթի ժառանգորդու-  
թյունը և գրքի դաստիարակչական ազդեցությունը հապիվ թե  
ննարավոր լինեն լրիվ շափուկ: Պրակտիկ կյանքի համար  
առաջ քաշված հարցի նշանակությունը միանդամայն պարզ  
է: Դրասերներ հանդիպում են ամենավար, բոլոր մասնագի-  
տությունների մեջ, հետեւապը գրքի նկատմամբ նրանց սե-  
րը պետք է ծառայի որպես ջան, որ լուսավորում է գրքի հա-  
նապարհը, որ ոնունիսկ մթնում է լույս տալիս», եթե կան  
շաշքեր, որոնք տեսնում ենք: Եվ գրքասերները շրջապատի  
հայացքը պետք է ուղղեն գետի գիրքը, որը հարգելը, պահ-  
պանելն ու կատարելապործելը թիւ է, հարկավոր է կարդալ  
ու կյանք մտցնել: Այսողեղ նորից անխուսափելիորեն հետե-

վրա՞մ է այն միտքը, որ դիրքը և նրա հետ կապված հարցերը  
արդիականության կարևորագույն հարցերից են։ Գրքասիրու-  
թյան առաջ մեր երկրում զարգացման լայն հորիզոններ են  
բացվում։ Նրա խնդիրն է՝ գիրքը դարձնել հաճելի, գրավիչ  
ու օգտակար, հաստատել այն լայն կենդանի ու միաժամա-  
նակ ամուր հիմքի վրա, պատվաստել գիրքը՝ կենդանի ու հա-  
վերժ խոսքի այդ անոթը, պահպանելու անհրաժեշտության  
դիտակցումը, ի վերջո, հավաքել ժամանակի ու մարդկանց  
կողմից արդեն մաշված, կիսակենդան, բայց զեռ արժեքա-  
վոր գրքերը, որպեսզի թուսաստանի գրքի շտեմարաններում  
մշտապես պահպանվեն մշակույթի և քաղաքակրթության  
հին ու նոր հուշարձանները։

15.XI-1924.

ԿՈՒՖԼԵՎ ՄԻԽԱԻԼ ՆԻԿՈԼԱԵՎԻ<sup>Հ</sup>

ԳՐԱԾԱԿԱՆ ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՐԱԾԱԿԱՆ ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
(Տեսական ակնարկ)

ԿՈՒՓԼԵՎ ՄԻԽԱԻԼ ՆԻԿՈԼԱԵՎԻ<sup>Հ</sup>

ԲԻBLIOFILIA Ի ԲIBLIOMANIA  
(Теоретический очерк)

(На армянском языке)  
Общество книголюбов Армении  
Издательство «Советакан грох»  
Ереван 1981

Հրատ. Խմբագիր՝ Ա. Հ. ՊՈՂԱՍՅԱՆ  
Խմբագիր՝ և գեղ. Խմբագիր՝ Ա. Վ. ԳԱՎԱՐՅԱՆՆ  
Տեք. Խմբագիր՝ Մ. Հ. ՄԻԱՍՅԱՆ  
Վերառուղող ուրագիր՝ Մ. Լ. Լեզնյան

Հանձնված է շարժածքի 24 պիտույքի 1981 թ.: Խորհրդական և տպագրության 24 ապրիլի 1981 թ., թուղթ՝ № 1 70×108<sup>1/32</sup> 3,85 պայմ. մամ. տպ. 5,5 մամ.; նրան: 3,05 մամ. սրատվեր 151, տպացանակ 3000; Գիլը 40 կ.: Տառատիստիկ՝ գրքի սովորական, տպագրության՝ հարթ:

«Անդեստական գրու» կողմանց ուղարկությունն. Երևան—9, Տերյան 91:

Տպարանի հասցեն՝ ԳԱ Կորուսյանի կողմանց էջմիածնի տպարան  
Եղմանձնության գործակությունն. Եղմանձնության գործակությունն.